

Չաջողության բանաձևը.

Խոհարարական գիրք Վիզգրադ 4 երկրների
և Արևելյան գործընկերության երկրների
հանրային մասնակցության փորձի մասին



Աջակիցներ՝

Արթուր Գրիգորյան, Էկոհրավուներ, Հայաստան

Ինգա Չարաֆյան, ԷկոԼուր, Հայաստան

Դավիդ Զիփաշվիլի, Green Alternative, Վրաստան

Իշթվան Ֆարկաս, National Society of Conservationists - Friends of the Earth Hungary, Հունգարիա

Իրինա Հոլովկո, EcoAction, Ուկրաինա

Վլադլենա Մարցինկեվիչ, NECU, Ուկրաինա

Յուրայ Չամկովսկի, Միրոսլավ Մոյզիս, Տատյանա Նեմցովա, Յուրայ Մելիչար, CEPA, Սլովակիա

Անելիա Ստեֆանովա, CEE Bankwatch Network

Մանանա Կոչլադե, CEE Bankwatch Network

Խմբագրություն՝

Թրեվիս Բահիլ

Այս ձեռնարկը հրապարակվել է Եվրոպական միության և Վիզգրադի միջազգային հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ: Սույն հրապարակման բովանդակությունը բացառապես CEE Bankwatch Network-ի պատասխանատվությունն է և ոչ մի հանգամանքում չի կարող համարվել որպես Եվրոպական միության և Վիզգրադի միջազգային հիմնադրամի դիրքորոշում:



Government of the Netherlands

Բովանդակություն

Ներածություն.....	4
Մասնակցության մեխանիզմի լավագույն օրինակը՝ «գործընկերության սկզբունքը» ԵՄ բյուջեում	5
Մոտավորեցում ԵՄ օրենսդրությանը և քաղաքացիական հասարակության հզորացում՝ ԶՀԿ-ների և ազգային կառավարության միջև երկխոսությունների առավելություններն ու թերությունները	7
Միջավայրի ակտիվացման լավագույն օրինակ. Վրաստանում ԶՀԿ-ները կառուցեցին երկխոսությունը ԵՄ հաստատությունների հետ	7
ԶՀԿ-ները դեպի կայուն զարգացում	9
Ապագայի հեռանկարները	10
ԶՀԿ-ներ ԱԼԳ և Վիզգրադի երկրներում	10
Ուսումնասիրության կոնկրետ դեպքեր	11
Հայաստան	11
ՓՅԷԿ-երի զարգացումը Հայաստանում չի բավարարում մարդկանց սոցիալական և բնապահպանական կարիքները՝ խախտելով նրանց բնապահպանական իրավունքները	11
Ամուլսարի ոսկու հանք	14
Վրաստան	18
ԵՄ ֆինանսավորվող ծրագրերի զարգացումը Վրաստանում	18
Մասնակցություն Վրաստանի Էներգետիկ ոլորտում որոշումների կայացման գործընթացին	21
Հունգարիա	29
ՀԿ-ների կապերի հաստատում և պատվիրակման թափանցիկ համակարգեր՝ ԵՄ ֆինանսավորմամբ արդյունավետ մասնակցության լավ հիմք	29
Սլովակիա	32
Ճանապարհը դեպի կենսամասսայի կայունության չափանիշների հաստատումը ԵՄ ֆինանսավորվող ծրագրերում	32
Լեհաստան	37
Թափոնների կառավարման մարտահրավերներ	37
S7 մայրուղին Լեհաստանում՝ նախազգուշական պատմություն	39

Ներածություն

Ժողովրդավարությունների կառուցման ճանապարհին կենտրոնական և արևելյան Եվրոպայի երկրները ունեցել են մեծ փորձ կապված աշխատող (և չաշխատող) հանրային մասնակցության հետ: Այս «խոհարարական գրքի» նպատակն է ուսումնասիրել հանրության ներգրավման պրակտիկան տարածաշրջանում ԵՄ ներդրումներին ամօրհասի որոշումների կայացման գործընթացում: Կոնկրետ գործերով փորձի և գիտելիքի փոխանակման հիման վրա՝ «Bankwatch»-ի անդամները և գործընկերներն անդրադառնում են իրենց երկրներում մինչ այժմ իրենց ունեցած առաջընթացին: Կոնկրետ օրինակների և դեպքերի ուսումնասիրությունների միջոցով ներկայացնում ենք մի քանի եզրակացություն և քաղած դասեր:

Այս խոհարարական գիրքը Վիգորայի հիմնադրամի և Նիդերլանդների բնապահպանության նախարարության կողմից ֆինանսավորվող ծրագրի գործընկեր խմբերի գրեթե մեկուկես տարվա փորձի փոխանակման արդյունքն է:

2018 թվականն առանցքային տարի է լինելու քաղաքականության փոփոխությունների առումով ԵՄ ֆինանսական հաստատություններում: Շարունակվում են քննարկումները ԵՄ ապագա բյուջեի կանոնների և առաջնահերթությունների մասին՝ ներառյալ գործընկերության սկզբունքը: ԵՄ ֆինանսական հաստատությունները կենթարկվեն փոփոխությունների թափանցիկության, հանրային մասնակցության և հաշվետվողականության սկզբունքների և չափանիշների առումով:

«Bankwatch»-ը թափանցիկությունը և հանրային մասնակցությունը դարձրել է ֆինանսական հաստատությունների որոշումների կայացման գործիք և իր գործառնությունների նպատակ: Ինչ՞ու եք մենք հետևում այդ ֆինանսական հաստատություններին: ԵՄ ֆինանսների բախշման մասին որոշումները կառավարության գործունեության ամենատեսանելի մասերից մեկն են՝ ծառայելով որպես ուղենիշ հանրային և մասնավոր սեկտորների համար:

Ներդրումների ժողովրդայնացումը Ներդրումների եվրոպական բանկի (ՆԵԲ), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՉԵԲ) և ԵՄ բյուջեի կողմից կարող են միայն ապահովվել ազդակիր համայնքների պատշաճ

համաձայնությամբ և հարգելով այս նույն համայնքների քաղաքացիական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները:

Մասնակցության իրավունքի ապահովումը ներդրումներին ամօրհասի որոշումների կայացման գործընթացում պետք է լինի կենտրոնական և արևելյան Եվրոպայի և ԵՄ շահառուների՝ ներառյալ կառավարությունների, ԵՄ հաստատությունների, ՀԿ-ների և համայնքների օրակարգում:

Գոյություն ունի շրջադարձային տարբերություն մասնակցության դատարկ ծիսակարգով անցնելու և գործընթացի արդյունքի վրա ազդելու համար անհրաժեշտ իրական ուժ ունենալու միջև: Այս տարբերությունը փայլուն կերպով ներկայացված է ֆրանսիացի ուսանողների կողմից նկարված պաստառի վրա՝ նպատակ ունենալով բացատրել 1968թ. ուսանող-աշխատող ապստամբությունը: Այս պաստառը ընդգծում է այն հիմնարար կետը, որ մասնակցությունը՝ առանց իշխանության վերաբախման դատարկ և արգելակող գործընթաց է իշխանություն չունեցողների համար: Այն թույլ է տալիս իշխանության գլխին կանգնածներին պնդել, որ բոլոր կողմերն են հաշվի առնվել, բայց հնարավոր է ընձեռնում միայն կողմերից մի քանիսին օգուտ քաղել: Այն պահպանում է գործող իրավիճակը¹:



FIGURE 1 French Student Poster. In English, I participate; you participate; he participates; we participate; you participate . . . They profit.

Ծրագրի գործընկերները Վիգորայի և Արևելյան գործընկերության (ԱԳ) տարածաշրջաններից

1 Շերի Ռ. Արմսթայն, (1969) «Քաղաքացիների մասնակցության սանդուղքը», Պլանավորման ամերիկյան ասոցիացիայի ամսագիր, 35: 4, էջ՝ 216 – 224

ինտենսիվորեն հաղորդակցվել են՝ կիսվելով փորձով, փորձառնությամբ և աջակցելով միմյանց այն առումով, թե ինչպես ապահովել առավել լայն և որակյալ հանրային մասնակցության պրակտիկա իրենց համապատասխան երկրներում: Վերանայելով տարածաշրջանում ընդունված պրակտիկան՝ եկանք այն եզրակացության, որ ամենաարդյունավետ հանրային մասնակցությունը օրենսդրական միջոցների, հարկադիր կիրառման մեխանիզմների և հնարավորություններ շնորհող միջավայրի կապակցող օղակն է: V4 երկրները զգալիորեն առաջատար են որոշումների կայացման գործընթացում հանրային մասնակցության և գործընկերության կիրառման սկզբունքի առումով, որին լայնորեն աջակցում է ԵՄ-ն: Զաղաքացիական հասարակության մասնակցության հարթակի նեղացումը Վիզգրադի որոշ երկրներում արդեն իսկ ազդում է հանրային մասնակցության մեխանիզմների արդյունավետության վրա: ԱԳ երկրներում հանրային մասնակցության և գործընկերության առաջխաղացման մասին վատ մշակված օրենսդրությունը գումարած հանրային մասնակցության պրակտիկ մեխանիզմների, ձևերի և ընթացակարգերի բացակայությունը առաջացնում են մի շարք խոչընդոտներ, որոնք բացասաբար են ազդում շրջակա միջավայրի և մարդկանց վրա՝ միևնույն ժամանակ ուշացնելով կայուն զարգացումը:

Զաղաքացիական հասարակության միջև ընթացող փոխանակումը V4 և ԱԳ երկրներում հանգեցնում է ոչ միայն աճող գործընկերություններին, այլ նաև հաջողությունների ձեռք բերմանը կայուն զարգացման առումով, որն էլ խոհարարական գրքում ցուցադրվում է կոնկրետ օրինակների և դեպքերի ուսումնասիրությունների վրա: Այս խոհարարական գրքի վրա աշխատելիս՝ փորձել ենք գտնել այն կոնկրետ նվաճումները և ձախողումները, որ բնապահպանական քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ունեցել են իրենց համապատասխան երկրներում հանրային մասնակցության առումով, իրենց ձևերով և միտումներով՝ նպատակ ունենալով ապահովել տեղեկատվության հետագա փոխանակումը:

Մասնակցության մեխանիզմի լավագույն օրինակը՝ «գործընկերության սկզբունքը» ԵՄ բյուջեում

Գործընկերության սկզբունքը ներդրվել է 1988 թվականին՝ որպես Համախմբվածության քաղաքականության 4 սկզբունքներից մեկը՝ դառնալով Կառուցվածքային հիմնադրամների խորհրդատվության, համակարգման և որոշումների կայացման համար պաշտոնական

նախապատրաստական աշխատանքները: Գործընկերության սկզբունքը հիմնականում ամրապնդվել է վերջին տասնամյակում բազմամակարդակ կառավարման իրականացմամբ. շահառուները՝ ներառյալ տարածաշրջանային և տեղական իշխանությունները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, ինչպես նաև պետական իշխանությունները ընդգրկված են գործընթացում: 2013թ. գործընկերության վարկեցողության եվրոպական կանոնագիրքը դարձավ իրավական փաստաթուղթ, որն օգնում է անդամ պետություններին ստեղծել մեխանիզմներ ԵՄ բյուջեի կառավարման համար:

Արդյունավետ գործընկերությունները խթանում են գործընկերների միջև արդարության և հարգանքի արժեքային հավասարությունը, հստակ ուշադրությունը կոնկրետացնում են առկա նպատակների վրա՝ միևնույն ժամանակ ընդունելով, որ անհատ գործընկերների շահերը կարող են միևնույնը չլինել: Հետևաբար, տարբեր վերջնարդյունքները հնարավոր են և թույլատրելի: Սույն համատեքստում փոխգիշումը պարզապես մեկ ռազմավարություն է, որը կարող է կիրառվել համաձայնության հասնելու համար և այլ մոտեցումներ կարող են կիրառվել, որպեսզի արդյունավետ գործընկերությունները հակվեն դեպի նորարարություն: Զաղաքացիների մասնակցության սանդուղքին՝ գործընկերությունը համարվում է այն փուլերից մեկը, որտեղ քաղաքացիները իրական ուժ ունեն որոշումների կայացման գործընթացում:

Ինչպես ցույց է տալիս ԶԻԿ-ների փորձը նոր անդամ պետություններում՝ Հունգարիա, Լեհաստան և Սլովակիա, գործընկերային սկզբունքի հարկադիր կիրառումը ԵՄ կառուցվածքային հիմնադրամների դեպքում հանգեցրեց բազմակի դրական երևույթների, ներառյալ՝ իշխանությունների վարչական կարողությունների, հմտությունների աճ և բոլոր շահառուների արդյունավետության բարելավում, ինչպես նաև կազմակերպման նոր մեթոդներ քաղաքացիական հասարակության հատվածներում: Գործընկերության սկզբունքի, հանրային մասնակցության և թափանցիկության միջև կապը հանդիսանում է պատշաճ կառավարման, կայուն զարգացման և կոռուպցիայի դեմ պայքարի հաստատված աղբյուր: Հանձնաժողովի կողմից գործընկերության տրված գնահատականն ասում է, որ «...շատ ծրագրեր և նախաձեռնություններ հանդիսանում են ոչ միայն պաշտոնական նախապատրաստական աշխատանքներ խորհրդատվության, համակարգման և որոշումների կայացման համար...այլ նաև զգալի կարողություն բազմաթիվ կազմակերպությունների համատեղ գործողությունների և գործառնությունների համար քաղաքականության որոշակի ոլորտներում, սեկտորներում, տարածաշրջաններում և տեղական

վայրերում: Ավելին՝ այս կարողությունը արդեն իսկ հաճախ դուրս է գալիս Կառուցվածքային հիմնադրամի գործունեության շրջանակներից և շատ դեպքերում տարածաշրջանային և տեղական զարգացման և սոցիալական քաղաքականության ոլորտում նորարարությունների հիմնական ռեսուրսն է»²:

Այս պարագայում հանրային մասնակցությունը և գործընկերությունը պարզապես ձևականություն չէ: Հունգարիայում քսան տարվա ընթացքում ՀԿ-ների կողմից գործարար կապերի ստեղծումը և փորձը ՀԿ-ների և պետական մարմինների միջև հաջող համագործակցության հաստատուն օրինակ է: ԵՄ համախմբվածության հիմնադրամի դեպքում այս կառուցակարգված և լավ պահպանված համագործակցությունը տանում է դեպի ԵՄ ֆինանսավորմանը ներկայացված ծրագրերի առաջարկների բնապահպանական կայունության չափանիշների ինտեգրման որակի աճին: Գործընկերության դրույթն ուժեղացնում և ուղղում է ՀԿ-ների համակարգման և ներկայացման ներկայիս ապարատը, ինչպես օրինակ ՀԿ-ների տարեկան ֆորումները և ընտրման թափանցիկ գործընթացները: Այս մեխանիզմները դառնում են ժողովրդավարական և մասնակցային որոշումների կայացման օրինակներ հասարակության այլ սեկտորներում: Չնայած վերջերս ընտրված հունգարական կառավարությունը առավել քիչ է աջակցում ԵՄ բյուջեում հանրային մասնակցությունը և փորձում է իրականացնել ԵՄ տարածաշրջանային քաղաքականության գործընկերության գուտ նվազագույն պահանջները, բնապահպանական ՀԿ-ները դեռևս ունեն զգալի ազդեցություն՝ ապահովելով ԵՖ ֆինանսավորման բնապահպանական և սոցիալական բարելավված կատարողականություն՝ լավ զարգացած, թափանցիկ և մասնավորից դեպի ընդհանուրը գնացող մոտեցումների շնորհիվ: ԱԼԳ երկրներում գործընկերության սկզբունքը կիրառվում է հաստատված պաշտոնական ԵՄ-քաղաքացիական հասարակության հարթակների միջոցով, որը հանգեցրեց հանրային մասնակցության աճի և ներգրավմանը ԵՄ ծրագրերի գործողությունների և կառավարության գործողությունների ծրագրային և բյուջետային մակարդակներում: Զանի դեռ գործընկերության սկզբունքի ամբողջական կիրառումը սահմանափակված է Արևելյան գործընկերության երկրներում, կան նշաններ, որ հանրային մասնակցության լավագույն օրինակների, միջոցների և գործիքների կիրառումը կարող է դրական ազդել ԵՄ ներդրումների, ինչպես նաև այլ միջազգային ֆինանսական հաստատությունների (ՄՖՀ) ներդրումների ընդհանուր պլանավորման,

իրականացման, մշտադիտարկման և գնահատման վրա:

Հետևաբար, կարող ենք եզրակացնել, որ ԵՄ հիմնադրամի՝ գործընկերության սկզբունքի իրականացման պահանջները որոշումների կայացման գործընթացում հանգեցնում են մի քանի կառուցվածքային փոփոխության՝

1) Հանրային կառավարման վարքագծի փոփոխություններ հանրային մասնակցությունը փնտրելու և ողջունելու առումով,

2) Ծրագրերի և նախագծերի որակի և կայունություն բարելավում՝ ներդնելով քաղաքացիական հասարակության գործընկերների կողմից առաջ քաշված ոլորտները և քննարկումները, ինչես օրինակ ազդակիր համայնքների մտահոգությունները բնապահպանական և սոցիալական առումներով,

3) Հզորացնել ՀԿ-ների կազմակերպչական, գործարար կապերի հաստատման և ներկայացուցչական համակարգերը,

4) Հզորացնել ՀԿ-ների կարողությունները և գիտելիքը՝ աջարկելով վերապատրաստման դասեր գործընկերների համար՝ հզորացնելու քաղաքացիական հասարակությունը, որն ունակ է բանակցել առաջարկներ և լուծումներ:

Եվրոպական հանձնաժողովը և անդամ պետությունները կարող են կարևոր դեր խաղալ ԶՀԿ-ների հետագա հզորացման գործում Եվրոպական միության և՛ դրսում, և՛ ներսում՝ հատկապես Արևելյան գործընկերության երկրներում: Եվրոպական գործընկերության գործիքի կանոնակարգի համաձայն, որը սահմանում է, «...սույն կանոնակարգի նպատակները պետք է հետապնդվեն արտաքին գործընկերների՝ ներառյալ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և տեղական իշխանությունների համապատասխան ներգրավմամբ՝ Միության աջակցության նախապատրաստման, իրականացման և մշտադիտարկման գործում՝ ելնելով նրանց դերակատարությունների կարևորությունից: ԵԳԳ-ը պետք է նաև աջակցի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների զարգացմանը արդյունավետ ներպետական հաշվետվողականություն և տեղական սեփականության իրավունքը երաշխավորելու և ժողովրդավարայնացման գործընթացում լիակատար դերակատարներ լինելու նպատակով»:³

ԵՄ ֆինանսավորման ընդհանուր շրջանակը ԵԳ երկրների համար ներառում է բյուջետային աջակցությունը, միասնական առաջնահերթությունների շրջանակի սահմանումը և համատեղ ծրագրերը, որոնք կարող են ստեղծել

2 http://ec.europa.eu/regional_policy/sources/docgener/evaluation/doc/rathe/asec8.pdf

3 <http://eur-lex.europa.eu/legal-content/en/TXT/?uri=CELEX:32014R0232>

ամուր հիմքեր գործընկերության սկզբունքի կիրառման համար: Սա մասնավորապես կարևոր է՝ հաշվի առնելով այն փաստը, որ ԵՄ զարգացման օրակարգը գնալով շեշտում է, որ անհրաժեշտ է ուղղել այդ աջակցությունը այսպես կոչված «համադրային» մեխանիզմների միջոցով, որոնք գործածում են ԵՄ բյուջեն որպես երաշխիք իրենց վարկերի համար: Այս մեխանիզմի նպատակն է զուգավորել ԵՄ ֆինանսները ՄՖՅ-երի ֆինանսների և մասնավոր ներդրումների հետ աղքատիկ հանրային ռեսուրսների ուժեղացման միջոցով:

Այս միտումը կլինի առավել ակնհայտ գալիք տարիներում, քանի որ Հանձնաժողովը պլանավորում է կիրառել նույն մոտեցումը ԵՄ հաջորդ՝ 2020-2027թթ. բյուջեի համար: Նոր մոտեցումը բաղկացած է Եվրոպական ֆինանսների համախմբումից, որոնք անցյալում ծախսվել էին որպես ծրագրերի անմիջական դրամաշնորհներ, որպես ՄՖՅ-երի վարկերի և գործառնությունների երաշխիքներ՝ այսպիսով ուժեղացնելով հանրային աղքատիկ ռեսուրսները՝ համախմբելու մասնավոր ֆինանսները և խթանելու մասնավոր սեկտորի գործառնությունները բյուջետային սահմանափակումների համատեքստում:

Հետևաբար, առավել քան կարևոր է ապահովել, որ ԵՄ-ն և ԱԳ երկրների կառավարությունները շարունակեն երկխոսություն՝ ապահովելով գործընկերության սկզբունքի կիրառումը և հանրային մասնակցության լավագույն օրինակները Եվրոպական ծագում ունեցող ֆինանսների համար՝ ներառյալ պետական բանկերը: Երբ քաղաքացիական հասարակության տարածքի սահմանափակման միտումները գնալով աճում են (սահմանափակող օրենքների և/կամ տարակարծիք ձայների ահաբեկման միջոցով), մենք հաճախ տեսնում ենք, որ բացակայում է հանրային մասնակցության ցանկացած ձևի նախապայմանը՝ այլևս չնշելով լավագույն օրինակը: Հետևանաբար, ԵՄ-ն պետք է նայի, թե ինչ լծակներ ունի ձեռքի տակ՝ խրախուսելու ԱԳ երկրներին և ապահովելու, որ քաղաքացիական հասարակության համար միջավայրը իսկապես օժանդակում է ակտիվ մասնակցությանը:

Ստավորեցում ԵՄ օրենսդրությանը և քաղաքացիական հասարակության հզորացում՝ ԶԿ-ների և ազգային կառավարության միջև երկխոսությունների առավելություններն ու թերությունները

Եվ՝ Եվրոպական միության, և՛ ԱԳ երկրների փորձառնությունները միակողմանի չեն: Այս

երկրների կոնկրետ օրինակների և դեպքերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կոնկրետ դեպքում կարող ես գտնել կամ չգտնել դրական օրինակներ և որոշում կայացողների պատրաստակամություն: Նաև ակնհայտ է, որ ԵՄ խմբերը շատ ավելի մտահոգված են այն քաղաքականության աշխատանքներով, որոնք կունենան հեռահար ազդեցություն իրենց երկրի զարգացման քաղաքականությունների վրա, մինչդեռ ԱԳ երկրների ԶԿ-ները դեռևս ավելի զբաղված են կոնկրետ քարոզարշավներով: Այնուամենայնիվ, ԱԳ երկրներում կան ԶԿ-ների հանրային մասնակցության օրինակներ, որոնք նույնիսկ առաջնորդում են սեկտորիալ բարեփոխումների օրինակը, ինչպես Հայաստանի և փոքր հիդրոէներգետիկայի զարգացման դեպքում:

Հանրային ներդրումների անտեսման ծախսերը նոր քաղաքականությունների զարգացման գործում և/կամ զարգացման նոր նախագծերում ավելի վճռորոշ են ԵՄ անդամ պետությունների և ԱԳ երկրների դեպքում, որը ներառում է բարեփոխումների ուշացված իրականացում կամ զարգացման նախագծերի հետաձգում ավելի երկար ժամանակահատվածով: S7 մայրուղու դեպքը Լեհաստանում ուշադրության արժանի է հենց այս առումով, քանի որ ծրագրի գործընկերը առանձնացնել էր, «...գործընկերությունը և հանրային մասնակցությունը իսկապես կարող են լավացնել ներդրումային ծրագրերը, եթե դրանց լուրջ են վերաբերվում:» Ճանապարհային նախագծերի դեպքում սովորական փաստ է բնապահպանական հակասությունների առաջացումը, բայց ազնիվ երկխոսության միջոցով սովորաբար հնարավոր է գտնել լուծումներ, որոնք նվազեցնում են միջավայրին պատճառվող վնասը:

Միևնույն տրամաբանությամբ կարելի է առաջնորդվել Հայաստանի, Վրաստանի և Ուկրաինայի դեպքերում. հանրային ազնիվ երկխոսությունը, որը փորձում է այլընտրանքային լուծումներ գտնել, կարող է առավել քիչ ազդեցություն թողնել միջավայրի վրա և ներգրավել քաղաքացիներին հանրային մասնակցության գործընթացում:

Միջավայրի ակտիվացման լավագույն օրինակ. Վրաստանում ԶԿ-ները կառուցեցին երկխոսությունը ԵՄ հաստատությունների հետ

2014թ. մարտին Եվրոպական արտաքին գործերի ծառայությունը (ԵԱԳԾ) և Եվրոպական հանձնաժողովը ներկայացրեցին «Հարևանությունը

խաչմերուկներում»⁴ ծրագիրը՝ ընդգծելով ԶԶԿ-ների կարևորությունը որպես ԵՄ համագործակցության կառուցվածքային տարր արևելյան և հարավային հարևանների հետ⁵: Նրանց ջանքերն ուղղված էին ստեղծելու կառուցակարգված երկխոսություն քաղաքացիական հասարակության, տեղական իշխանությունների և ԵՄ-ի միջև: 2014 թվականից ի վեր ԵՄ պատվիրակությունները Եվրոպական հարևանության քաղաքականության երկրներում պատասխանատվություն են ստանձնել ներգրավել քաղաքացիական հասարակությանը:

Հանձնաժողովը ԶԶԿ-ներին տրամադրեց ֆինանսական աջակցություն՝ ակնկալելով նրանցից բարեհաջող և մանրամասն ուսումնասիրել իրենց կառավարությունները և մասնակցել իրենց երկրներում ԵՄ գործառնությունների ծրագրավորմանը, պլանավորմանը և մշտադիտարկմանը Եվրոպական գործընկերների հետ միասին: Վերջին տարիների պրակտիկան ցույց է տալիս, որ հաջողությունը տարբեր է ըստ երկրների՝ կախված և՛ ԶԶԿ-ների պատրաստվածության մակարդակից, և՛ երկրում ընթացող ժողովրդավարական գործընթացներից:

Վրաստանում ԵՄ պատվիրակության նախաձեռնությունները 2016-2017թթ. հոյակապ օրինակ կարող են ծառայել. ԵՄ-Վրաստան համատեղ ծրագրավորման գործընթացը հանրային մասնակցության իմաստալից գործընթաց էր, որտեղ ԶԶԿ-ներին և կառավարությանը հավասար վերաբերմունք էր ցուցաբերվում և վերջնական որոշումը կայացվում էր համապարփակ խորհրդակցությունների արդյունքում: Արդյունքում 2017-2020թթ. Վրաստանի միասնական աջակցության շրջանակային փաստաթուղթը էներգետիկան սահմանում է որպես առաջնահերթություն, «էներգետիկ անկախության մեծացումը երկրառազմավարական անհրաժեշտություն է, որին կարելի է աջակցել էներգետիկ ոլորտի բարեփոխումների միջոցով՝ ԵՄ-ի հետ ինտեգրման գործընթացի և վերականգնվող էներգիայի ռեսուրսների օգտագործման համաձայն»: Այդ փաստաթուղթը նաև ընդգծում է, որ էներգետիկ նախագծերի բնապահպանական գնահատումը (ՇՄԱՌԳ կամ ՇՄԱԳ) պետք է «... իրականացվի Եվ չափանիշների համաձայն»⁶, որը ստեղծում է նշանակալի երաշխիքներ նախագծերի ազդակիր համայնքների համար:

4 <http://europeanpublicaffairs.eu/a-review-of-the-european-neighborhood-policy-2014-edition/>

5 http://eeas.europa.eu/enp/pdf/2014/joint_communication_en.pdf

6 Adopted 13.July, 2017, http://ec.europa.eu/transparency/regcomitology/index.cfm?do=search.documentdetail&Dos_ID=14731&DS_ID=51944&Version=2

Տեղի պատվիրակության կապը և ներգրավումը ԶԶԿ-ների հետ մասնավորապես կարևոր է այն երկրների համար, որոնք ստորագրում են ասոցացման համաձայնագիր և պարտավորվում են մոտավորեցնել ԵՄ օրենսդրության հետ:

Դեռևս կան խոչընդոտներ, որոնք կարող են նշանակել իրենց ազդել մոտավորեցման տեմպին: Օրինակներից մեկն է Ուկրաինայի «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման մասին» (ՇՄԱԳ) օրենքը և մեկ այլ օրենք «Շրջակա միջավայրի ազդեցության ռազմավարական գնահատման մասին» (ՇՄԱՌԳ), որոնք ընդունվել են 2017թ. մայիսին և ուժի մեջ են մտել 2017թ. դեկտեմբերի 18-ին՝ փոխարինելով Էկոլոգիական փորձաքննության մասին օրենքը: Օրենքները պետք է միևնույն ժամանակ ընդունվեին 2016թ., սակայն 2016թ. աշնանը Ուկրաինայի նախագահը արգելք դրեց այս օրենքների վրա: Այս իրադարձությունը առաջացրեց շատ քաղաքական գործիչների և ԶԶԿ-ների մտահոգությունը, որոնք մեղադրում էին քաղաքական լոբբիին արդյունաբերական մեծ խմբերի ներկայացուցիչների ճնշմանը ենթարկվելու մեջ, մասնավորապես ագրոհոլդինգների և արդյունաբերական մասշտաբներով որոշակի միս արտադրողների կողմից: ՇՄԱԳ-ի մասին նոր օրենքի իրականացումը վիճահարուց է, քանի որ աջակցող ենթաօրենսդրական ակտերը դեռևս չեն մշակվել:

Այս իրավիճակը գրեթե լիովին կրկնօրինակում է այն իրադրությունը, երբ Վրաստանի բնապահպանական օրենսդրությունը մոտավորեցվում էր ԵՅ 85/337 և 2001/42/ դիրեկտիվաների հետ:

Չնայած այն հանգամանքին, որ պաշտոնական վերջնաժամկետները պահպանվել էին, այն իրավիճակներում, երբ համայնքներն ապրում են «զուգահեռ իրականությունում» առանց պատշաճ իրազեկման կամ ընթացող բարեփոխումների և պլանավորված նախագծերի խորհրդակցման, այդ համայնքներն մնում էին առանց որևէ երաշխիքի: Վատթարագույն փաստն այն էր, որ երբ համայնքներն փորձում էին բարձրաձայնել իրենց մտահոգությունները հիմնված հասանելի սակավ տեղեկատվության վրա, նրանք բախվում էին սպառնալիքների և ահաբեկման: Արդյունքում, մեծ ընկերությունները օգտագործում են պահը, ինչպես նաև իրավաբանական և իրավունքների մասին տեղեկատվության պակասը՝ հետապնդելով իրենց շահերը «հողերի զավթման» գործընթացում և ընդլայնելով բնապահպանական առումով վտանգավոր ձեռնարկությունները՝ անասնապահական մեքենայացված ֆերմաները: Ելնելով ընթացիկ միտումներից՝ սահմանափակել տարածքը քաղաքացիական հասարակության համար՝ ցանկացած երկրում քաղաքացիական

7 <http://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?pubRef=-//EP//TEXT+TA+P8-TA-2017-0365+0+DOC+XML+V0//EN>

հասարակությանը պետք է ընդհանուր առմամբ հաշվի առնել, երբ քննարկվում են կառուցավորված երկխոսություններ ԶԶ-ների հետ: Եվրոպական խորհրդարանի կողմից վերջերս ընդունված բանաձևը, ի թիվս այլոց, պերճախոս շարադրում է, «ԵՄ-ի համար ընդունել շահառու երկրներում կառավարություններին, քաղաքական կուսակցություններին, խորհրդարաններին և վարչակազմերին ուղղորդելու անհրաժեշտությունը, մշակել ռազմավարություններ համապատասխան իրավական, վարչարարական և քաղաքական միջավայր ստեղծելու համար՝ հնարավոր դարձնելով ԶԶ-ների արդյունավետ աշխատանքը», ողջունում է «ԵՄ երկարաժամկետ պարտավորությունը աջակցել քաղաքացիական հասարակությանը զարգացող երկրներում» և պնդում «ԵՄ-ն աներկբա կոչ է անում շարունակել և մեծացնել ԵՄ աջակցությունը և ֆինանսավորումը՝ ստեղծելով ազատ և նպաստող միջավայր քաղաքացիական հասարակության համար երկրում և տեղի մակարդակով՝ ներառյալ տարեկան ծրագրերի միջոցով⁸»:

ԶԶ-ները դեպի կայուն զարգացում

Քաղաքացիական հասարակության համար որոշումների կայացման գործընթացին մասնակցելու համար հնարավորությունների ստեղծումը հանգեցնում է այն փաստին, որ ԶԶ-ները առաջ են քաշում և մշակում ավելի շատ նախաձեռնություններ՝ ապահովելով կայուն զարգացում կոնկրետ ոլորտներում: Օրինակ՝ Հայաստանում ԶԶ-ն նախաձեռնեց «Աջակցություն նոր բարեփոխումներին փոքր ՋԷԿ-երի բնագավառում ԶԶ-կառավարություն երկխոսության միջոցով» ծրագիրը՝ ներգրավելով գրեթե բոլոր շահառուներին՝ ԶԶ-ներ, պետական պաշտոնյաներ և ակադեմիական հանրություն: Երեք տարվա ընթացքում 135 փոքր հիդրոէլեկտրոկայանների (ՓՋԷԿ) տեղում անցկացված մշտադիտարկման արդյունքում աշխատանքային խումբը հայտնաբերեց այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ կենսաբազմազանության կորուստը, Էկոհամակարգերի խաթարումը, անտառահատումը և ոռոգման ջրի պակասը: Առկա էին նաև խնդիրներ պատահարների դեպքում համարժեք փոխհատուցման առումով, ինչպես նաև բացակայում էին հանրային մասնակցության մեխանիզմները որոշումների կայացման գործընթացում: Այն նաև առաջարկում է լուծումներ գործող ՓՋԷԿ-երի համար, ինչպես նաև կանխում է մի շարք քաղաքականություններ և կանոնակարգերի

հետագա մշակումը, որոնք ներկայումս քննարկվում են ՀՀ կառավարության կողմից:

Այս իրավիճակը կրկնում է սլովակական ԶԶ-ների ջանքերը, որոնք պայքարում են ապահովել կայունության չափանիշների պահպանումը փայտի կենսամասսայից էներգիայի արտադրության գործընթացում՝ կանխելով արդեն իսկ մասսայական բնույթ կրող փայտամթերման արդյունաբերության աճը և կենսաբազմազանության հետագա դեգրադացիան: Եվրոպական կառուցվածքային և ներդրումային հիմնադրամների՝ գնալով աճող ֆինանսավորման հնարավորությունները շարժիչ ուժ էին հանդիսանում Սլովակիայի կառավարության համար՝ մշակելով կենսամասսայի կայունության չափանիշների ստեղծման՝ քաղաքականապես զգայուն գործընթացներ: ԶԶ-ի առաջադրանքն էր հարկադրել կիրառել կայունության մշակված ցուցանիշները, որոնք, որոշ հակադարձ ազդեցությունից հետո, հաստատվել էին Բնապահպանության գործառնական ծրագրի որակի մշտադիտարկման հանձնաժողովի կողմից: Այնուամենայնիվ, անտառտնտեսության ոլորտում կառավարության կողմից բարեփոխումների լիակատար պարտավորության չստանձնումը քաղաքական կամքի ուժի պակասի պատճառով ցուցանիշների կիրառելիության մասով դեռ մտահոգություններ է առաջացնում սլովակական ԶԶ-ների համար, որոնք փնտրում են այլ հնարավոր ուղիներ ԵՄ օրենսդրական գործընթացում:

Այս երկու դեպքերը հստակ ցույց են տալիս, որ ԶԶ համայնքները և՛ նոր անդամ պետություններում, և՛ ԱԳ երկրներում, արդեն իսկ իրազեկ են և ունակ խթանել կայուն զարգացումը հանրային մասնակցության միջոցով և խթանել տեղական համայնքներին, խմբերին, ակադեմիական հանրությանը և անհատներին ունենալ իրենց ներդրումը առավել լավ կառավարման ուղղված գործիքների և միջոցների մշակման գործում, ինչպես նաև աշխատել վերացնել և կանխել առկա և ապագա հնարավոր բնապահպանական և հասարակական վնասները:

Այս նպատակին հասնելու համար պետք է ընդայնև ոչ թե նեղացնել ԶԶ տարածքը: Սակայն բազմաթիվ ԱԳ երկրներում, ինչպես նաև մի քանի նոր անդամ պետություններում կարող ենք տեսնել, թե ինչպես է ընդհանուր իրավիճակը վատթարանում, որը գնալով առավել բացասական դեր է խաղում որոշումների կայացման ընթացակարգերում քաղաքացիական հասարակության ներգրավման առումով:

Ստորև ներկայացված դեպքերն ու օրինակները առանձնացնում են կառավարության անպատրաստակամությունը իրականացնել մասնակցային ժողովրդավարության սկզբունքները և ապահովել մարդկանց ներգրավումը որոշումների կայացման գործընթացում՝ հետաձգելով ծրագրերի և

8 <http://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?pubRef=//EP//TEXT+TA+P8-TA-2017-0365+0+DOC+XML+V0//EN>

Նախագծերի իրականացումը: Ավելին, որոշ կառավարությունները փորձում են օգտագործել հատուկ ուժեր պայքարող համայնքների դեմ, որ ծնում է գայրույթ և անվատահոսությունը ժողովրդավարական հաստատությունների նկատմամբ:

Ապագայի հեռանկարները

Բարեխիղճ կառավարման չափորոշիչների՝ մասնավորապես գործընկերության և որոշումների կայացման գործընթացում հանրային մասնակցության սկզբունքի կիրառումը ԱԳ տարածաշրջանի երկրների համար ամենամեծ մարտահրավերներից մեկն է: Արևելյան գործընկերությունը նպատակ ունի ամրապնդել արևելյան Եվրոպայի երկրների և՛ ԵՄ համագործակցությունը, և՛ ինտեգրումը, որն անկախ գործընթաց է: Որոշում կայացողները պետք է ապահովեն, որ ԵՄ բոլոր գործողությունները օգնում են խթանել ժողովրդավարությունը և օժանդակում են մարդու իրավունքների պաշտպանությանը և կայուն զարգացմանը: Յուրաքանչյուր երկրի քաղաքացիները պետք է տեսնեն օգուտները, ոչ թե լավ մշակված ճարտասանություն, այլ իմաստալից գործողություններ:

Այս նպատակին հասնելու համար կարևոր է, որ Եվրոպական հանձնաժողովը և անդամ պետությունները աջակցեն ԱԳ-երկրներին բարեխիղճ կառավարման, գործընկերային և հանրային մասնակցության սկզբունքի, ֆինանսական գործիքների կիրառումը, որոնք գտնվում են իրենց տրամադրության տակ այս երկրներին քաջալերելու նպատակով: Եռախոսությունների խթանումը (Եվրոպական հանձնաժողով, կառավարություն և ԶԻԿ-ներ) տարբեր ձևաչափերով՝ ներառյալ մարդու իրավունքների երկխոսությունը, ԵՄ-երկիր ասոցացման ԶԻԿ հարթակները և բարելավված օրենսդրությունները կբարձրացնեն հարևան երկրների կառավարությունների մակարդակը: Գործընկերային սկզբունքների պարտադիր կիրառումը՝ բյուջետային աջակցության և միասնական շրջանակային առաջնահերթությունների դեպքում, նույնպես կմեծացնեն հանրային մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում:

Հետևաբար, կարևոր է, որ Եվրոպական հանձնաժողովը, անդամ պետությունները և ԱԳ կառավարությունները՝

- Խթանեն և մշակեն ԶԻԿ-ների հետ երկխոսության մեխանիզմները՝ ներառյալ բյուջետային աջակցման առաջնահերթությունների վերաբերյալ խորհրդակցություններ, սեկտորային բարեփոխումներ և իրականացում, ապահովեն արդյունավետ հանրային մասնակցություն

ՇՄԱԳ-ում և՛ երկրի, և՛ ծրագրի մակարդակներում՝ ընթացակարգային ժողովրդավարության լավագույն պրակտիկայի ստեղծման միջոցով:

- Ճանաչել ԶԻԿ-ներին որպես երկխոսությունների և խորհրդակցությունների պատշաճ գործընկերներ պետական իշխանությունների հետ,

- Աջակցեն ՇՄԱԳ և ՇՄԱՌԳ օրենսդրության իրականացմանը, ինչպես նաև արագացնեն ԵՄ օրենսդրության հետ ներդաշնակեցման և մոտավորեցման գործընթացները՝ ներառյալ սոցիալական ազդեցության մեղմացումը և արդյունավետ և ժամանակին հանրային մասնակցության վերահսկումը և ՇՄԱԳ հաշվետվությունների հասանելիությունը ազդակիր խմբերի, ակադեմիական հաստատությունների և ԶԻԿ-ների համար ԵՄ աջակցությամբ իրականացվող ծրագրերի և նախագծերի դեպքում,

- Աջակցեն հավասար հնարավորությունների ստեղծմանը մարզինալացված խմբերի համար (կանայք, տարեցներ և այլն) և կանխեն տեղական համայնքների վրա գործադրվող ճնշումը մասնավոր բիզնես ձեռնարկությունների կամ պետական իրավապահ կառույցների կողմից,

- Ապահովեն իմաստալից խորհրդակցություններ ԶԻԿ-ների և համայնքների հետ ծրագրերի և նախագծերի վերաբերյալ,

- Ապահովեն, որ և՛ պրակտիկայում, և՛ օրենքով առկա է նպաստող միջավայր քաղաքացիական հասարակության համար ակտիվորեն մասնակցել և լսելի դարձնել իրենց ձայնը:

ԶԻԿ-ները ԱԳ և Վիզգրադի երկրներում

- Պետք է շարունակեն իրենց համագործակցությունը, գիտելիքի և փորձի փոխանակումը ծրագրերի և նախագծերի մակարդակում և ղեկավարեն նախաձեռնություններ հանուն կայուն զարգացման,

- Պետք է ապահովեն, որ քաղաքացիական հասարակությունը կարողանա լինել ուժեղ գործընկեր տեղի բնակիչների համար որոշումների կայացման գործընթացում՝ օգնելով նրանց պաշտպանել իրենց բնապահպանական, սոցիալական և տնտեսական իրավունքները,

- Պետք է կարողանա իրականացնել գործունեություն, որոնք զերծ են սպառնալիքներից կամ ահաբեկումից և ունենան արդյունավետ, անկախ ռեսուրսների մեխանիզմների ազատ հասանելիություն, եթե նրանց անվտանգությունը կամ ապահովությունը վտանգված է:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿՈՆԿՐԵՏ ԴԵՊՔԵՐ

Հայաստան

ՓՅԷԿ-երի զարգացումը Հայաստանում չի բավարարում մարդկանց սոցիալական և բնապահպանական կարիքները՝ խախտելով Նրանց բնապահպանական իրավունքները

Նախաբան

2017թ. հունվարի 1-ի դրությամբ, Հայաստանում աշխատում են մոտ 178 փոքր հիդրոէլեկտրակայաններ (ՓՅԷԿ), հինգ անգամ շատ քան Նախկին տարում: Նրանց ընդհանուր դրվածքային հզորությունը 328 ՄՎ է, որը կազմում է մոտ 957 միլիոն կՎտժ:¹

ՓՅԷԿ-երի բացարձակ մեծամասնությունը կառուցվել է վերջին տասնամյակներին: Վարկերը տրամադրվել են միջազգային զարգացման բանկերի կողմից, ինչպես օրինակ՝ ՄՖԿ, ՎՉԵԲ և KfW, որտեղ KfW-ի մասնաբաժինը ամենամեծն է՝ 66 միլիոն եվրո:²

1 http://arka.am/en/news/technology/share_of_electricity_produced_by_hydropower_plants_in_armenia_can_reach_40/

2 Վարկային առաջին պայմանագրի գումարը 6 միլիոն եվրո է (2004թ.), երկրորդինը՝ 18 միլիոն եվրո (2010թ.), իսկ երրորդինը՝ 40 միլիոն եվրո (2012թ.) <http://www.gaf-re.am/index.php?id=28>

Այնուամենայնիվ, բացառությամբ 3-4 ՓՅԷԿ-ի, գործող ՓՅԷԿ-երն ունեն խնդիրներ զարգացման բանկերի սոցիալական և տնտեսական չափանիշներին բավարարելու առումով՝ ներառյալ Արգիչի ՓՅԷԿ-ը և KfW-ի աջակցությամբ Եղեգիս գետի վրա կառուցված ՓՅԷԿ-երը:

Արգիչի ՓՅԷԿ

Արգիչի ՓՅԷԿ-ը 2012թ. կառուցվել է առանց համապատասխան թույլտվությունների և շահագործման է հանձնվել 2013թ.-ին: Համապատասխան թույլտվությունների բացակայությունը խախտում է մի շարք օրենքներ, ներառյալ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» և «Սևանա լճի մասին»³ ՀՀ օրենքները, քանի որ գետը Սևանա լճի ջրհավաք ավազանի մի մաս է կազմում:⁴ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը (Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիա) բացասական եզրակացություն տվել բոլոր ՓՅԷԿ-երին՝ ներառյալ Արգիչի ՓՅԷԿ-ին, որոնք բացասական ազդեցություն ունեն կենսաբազմազանության, էնդեմիկ և կարմիր գրքում գրանցված ցեղատեսակների և ջրի որակի վրա:

Նախագծի հիմնական թերություններից մեկը հանրային խորհրդատվության պակասն էր ապագա ազդակիր համայնքների և հողերի սեփականատերերի հետ: Այս անփութությունը հանգեցրեց սրված իրավիճակի համայնքի և ՓՅԷԿ-ի միջև, քանի որ այն օգտագործել էր համայնքային հողերը առանց պատշաճ հատուցում տալու գյուղացիներին: Սոցիալական կոնֆլիկտը հասունացավ 2013թ., երբ Արգիչի ՓՅԷԿ-ի դերիվացիոն խողովակները պայթեցին և

3 <http://ecolor.org/en/news/sevan/documents-on-small-hpp-project-on-argitchi-river-expired/4072/>.

4 Սևանի ջրհավաք ավազանը բարդ էկոհամակարգ է՝ 37 միլիարդ խմ քաղցրահամ ջրի ռեսուրսներով, 2000 մ ծովի մակարդակից բարձր: Առափնյա համայնքների բնակիչները գործածում են Սևան թափվող գետերի և աղբյուրների ջուրը որոգման և խմելու նպատակներով իրենց մաքրության և բարձր օրգանոլեպտիկ հատկությունների շնորհիվ:

մեծ վնաս հասցրեցին Վերին Գետաշեն գյուղի 30 ընտանիքների գույքին: ԷկոԼուրի մշտադիտարկման ծրագիրը բացահայտեց, որ Արգիչի ՓՅԷԿ-ի դերիվացիոն խողովակները վթարվել էին մի քանի անգամ տեխնիկական պատահարների պատճառով: Ստեղծված իրավիճակը շրջակա տարածքներում կարող է նպաստել հնարավոր ինժեներատեխնիկական երևույթների (սողանք և այլն) առաջացմանը:⁵

Չնայած կառավարություն ներկայացրած բազմաթիվ դիմումներին, ընկերությունը և տեղական ինքնակառավարման մարմինները մինչ այսօր չեն փոխհատուցել վնասի համար՝ անկախ տեղական ինքնակառավարման մարմինների տրված խոստումների⁶: Միևնույն ժամանակ հողերի մեծամասնությունը այժմ պիտանի չեն գյուղատնտեսական գործունեության համար՝ թողնելով մարդկանց առանց եկամտի հիմնական աղբյուրի⁷:

Մեկ այլ ազդակիր համայնքի՝ Ներքին Գետաշենի բնակիչները, ոռոգման ջրի բացակայության պատճառով բախվել են իրենց բերքը կորցնելու խնդրի հետ վերջին մի քանի ամսվա ընթացքում, «Ժամանակին գետն այնքան ջուր է եղել, որ ժողովուրդը նեղություն չեն կրել, ոնց էս ՅԷԿ-ը կառուցեցին, ժողովուրդը իրար են ուտում...»⁸

2017թ. մշտադիտարկային այցը պարզեց, որ իրավիճակը սարսափելի է տեղի բնակիչների համար ջրի ահագնացող պակասի, վնասների համարժեք փոխհատուցման բացակայության, հողերի ձեռքբերման և գյուղի կյանքի որակի վատթարացման պատճառով: ԷկոԼուրի աջակցության գյուղացիները պատրաստել են պաշտոնական բողոքի նախնական ներկայացում KfW-ի համապատասխանելիության մեխանիզմ՝ DEG:⁹

Սեւանա լիճ թափվող գետերի վրա կառուցված ՓՅԷԿ-երի խնդիրը դարձել է կառավարության կողմից քննարկված ամենակարևոր հիմնահարցերից մեկը: 2015թ. ԶԶ Նախագահ Սերժ Սարգսյանը ընդգծել է, որ «խնդիրը պետք է լուծել մարդկանց հետ խոսելով, պայմանավորվելով և հիմնադրամի միջոցով նրանցից ուղղակի ետ գնելով ու ապամոնտաժելով»:¹⁰ Կառավարության որոշումը Սեւանա լիճ թափվող գետերի վրա կառուցված

ՓՅԷԿ-երի ապամոնտաժման մեխանիզմների մասին դեռևս չի ընդունվել:

Եղեգիսի ձորում ՓՅԷԿ-երի կասկաղները

Եղեգիս գետը հոսում է Եղեգիսի գեղատեսիլ ձորով Զայաստանի Վայոց ձորի մարզում: Բարենպաստ պայմանները, հարուստ կենսաբազմազանությունը (բեզուարյան այծեր¹¹), մշակույթի հուշարձանները և պատմամշակութային ժառանգությունը (12-րդ դարի հրեական գերեզման, X-XI դդ. կառուցված Սմբատաբերդ ամրոց, 1303թ. տարեգրվող Չորաց եկեղեցի) գրավիչ են տուրիզմի զարգացման համար:

Այնուամենայնիվ, վերջին տարիներին Եղեգիս ձորի լանդշաֆտը զգալիորեն խաթարվել է, անհայտացել է կենսաբազմազանությունը և սանիտարական պայմանները վատթարացել են գետի ջրի սակավության և վատթարացող միկրոկլիմայի պատճառով: Այդ ամենի պատճառն այն փաստն է, որ բացի «Յերմոն-Ելիին» ոռոգման համակարգից, որը վերցնում է ջուր 200 հա հողատարածք ոռոգելու համար, 19 ՓՅԷԿ-երի դերիվացիոն խողովակներ են կառուցվել Եղեգիս գետի և դրա վտակների վրա: Արդյունքում, ձորը զրկվել է իր ջրից տուրիստական սեզոնի ամենաթեժ պահին:¹²

Ինչպես պնդում են տեղի բնակիչները, «Կիլոմետրերով ամառվա սեզոնին ջուր չի լինում... Նախքան ՓՅԷԿ-ը շատ կարմրախայտ ունեինք, բայց հիմա ձկան այս տեսակը լիովին վերացել է ՓՅԷԿ-երի պատճառով» և շեշտում են, որ զբոսաշրջությունը և գյուղատնտեսությունը կարող են հիմնական եկամտի աղբյուր դառնալ տեղի բնակիչների համար: Աշխատազրկությունը տարածված խնդիր է համայնքում և ՓՅԷԿ-ի գործարկմամբ այս խնդիրը չի լուծվել, մինչդեռ ենթակառուցվածքների և ներդրումների բացակայությունը փոքր տեղի արդյունաբերություններում խանգարում է տուրիզմի զարգացմանը:

Տեղի իշխանությունները պնդում են, որ զբոսաշրջության և գյուղատնտեսության զարգացումը հակասում է ՓՅԷԿ-երի հետ, «Դրանք վերցնում են մեր ջուրը... և քանդում մեր տեսարժան վայրերը... ՅԷԿ-երից ժողովրդին ի՞նչ օգուտ, ի՞նչ գործ են արել համայնքի համար...Ոչ ոք մեզ չի հարցրել, մենք այդ ՓՅԷԿ-ը ուզում ենք, որ կառուցվի մեր համայնքում, թե՛ չէ... Կիլոմետրերով ամառվա սեզոնին ջուր չի լինում. ամբողջ կանաչիզագիան լցվում է գետը, գետի բուսականությունը վերանում է... հողը չջրես,

5 <http://ecolor.org/en/news/energy/argitchi-shpp-monitoring-results-photos/8140/>

6 <http://ecolor.org/en/news/energy/verin-getashen-residents-demanding-compensation-from-shpp-administration/7943/>

7 <http://ecolor.org/en/news/water/signal-alarm-from-gegharkounik-region-again-argitvhi-shpp-pipes-broke/5273/>

8 <http://ecolor.org/en/news/water/residents-in-nerqin-getashen-left-without-irrigation-water/9333/>

9 KfW DEG-ի հաղորդակցումը դեռ ընթացքի մեջ է:

10 <http://ecolor.org/en/news/officials/armenian-president-proposes-to-dismantle-shpps-constructed-on-rivers-flowing-into-lake-sevan/7666/>

11 Բնության համաշխարհային հիմնադրամը (WWF) Շատինում կառուցեց կարմիր գրքում գրանցված կենդանիների, հատկապես բեզուարյան այծերի դիտելու տաղավար, որոնք ջուր են խմում Եղեգիս գետից՝ Շատին գյուղի մոտակայքում:

12 <http://ecolor.org/files/uploads/pdf/dzernarkangleren.pdf>

ի՞նչ պիտի հնձես... ՅԷԿ-երից ժողովրդին ի՞նչ օգուտ, ի՞նչ գործ են արել համայնքի համար»:¹³

135 ՓՅԷԿ-երի մշտադիտարկման արդյունքները Հայաստանում

ՓՅԷԿ-երի մշտադիտարկումն իրականացվել է ՄԱԾԾ/ԳԵՖ-ի կողմից ֆինանսավորվող «Աջակցություն նոր բարեփոխումներին փոքր ՅԷԿ-երի բնագավառում ԶԿ-կառավարություն երկխոսության միջոցով» ծրագրի շրջանակներում, որը մեկնարկել է 2014 թվականից:¹⁴ Ծրագիրն իրականացվել է ԷկոԼուր ԶԿ-ի կողմից՝ համագործակցելով ՀՀ բնապահպանության նախարարության, ակադեմիական հանրության և այլ ԶԿ-ների հետ:

2014-2017 թթ. ընթացքում մշտադիտարկման համատեղ թիմերը ստուգել են 135 ՓՅԷԿ և գետի Էկոհամակարգ: Մշտադիտարկման արդյունքում պարզվեց, որ ՓՅԷԿ-երի աշխատանքային ռեժիմը հաճախ հանգեցնում է Էկոհամակարգի խաթարմանը, կենսաբազմազանության և ձկան կորստի գետերում, ջրի ֆիզիկական և քիմիական ցուցանիշների վատթարացմանը և անտառահատմանը: Միևնույն ժամանակ, պարբերաբար ձևով բացահայտվել են սոցիալ-տնտեսական ազդեցությունների թիվը (ներառյալ՝ գյուղատնտեսական նպատակներով ջրի սակավությունը, ՓՅԷԿ սարքերի աղմուկը, գյուղատնտեսության և Էկոտուրիզմի զարգացման խոչընդոտումը, հողերի գնման և պատահարների դեպքում համարժեք փոխհատուցման խնդիրը, հանրային մասնակցության մեխանիզմների բացակայությունը որոշումների կայացման գործընթացում): Այս ամենը հզոր սոցիալ տնտեսական ազդեցություն է թողել ազդակիր համայնքների վրա, նվազեցնում է նրանց ապրուստի որակը և հանգեցնում է Հայաստանի քաղաքացիների բնապահպանական իրավունքների խախտմանը:

Մշտադիտարկման առաջին տարվա արդյունքների հիման վրա ՀՀ բնապահպանության նախարարությունը ԷկոԼուրի հետ միասին ստեղծեց ՓՅԷԿ-երի զարգացման ազգային քաղաքականության և ծրագրի հայեցակարգի մշակման խորհուրդ, որը ներառում էր պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և ՓՅԷԿ ոլորտի բիզնես ներկայացուցիչներ: Խորհուրդը հաստատեց ծրագրի աշխատանքային խմբի կողմից մշակված գործողությունների պլանը, որը դարձավ «Հայաստանի Հանրապետության

հիդրոէներգետիկայի զարգացման հայեցակարգի դրույթներն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի հիմքը: Նախագծի ընդունմամբ ակնկալվում է օրենսդրական փոփոխությունների և քաղաքականությունների մշակում, որը կապահովի ջրային ռեսուրսների առավել արդյունավետ գործածում և կայուն բնապահպանական հոսք գետերում, բնապահպանական թուլությունների տրման կանոնների բարելավում և վերահսկողության սահմանում ՓՅԷԿ-երի կառուցման և գործարկման ընթացքում:

¹⁵ ՀՀ բնապահպանության նախարարությունը առաջարկում է «Փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման եվ շահագործման համար շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման չափորոշիչներ հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ԷկոԼուրի ծրագրի արդյունքների հիման վրա: Այդ միջոցառումներն են՝

- Հաստատել փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման համար շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման չափորոշիչները:

- Շրջակա միջավայրի վրա փոքր հիդրոէլեկտրակայանների վնասակար ազդեցությունները կանխարգելելու կամ նվազեցնելու նպատակով փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման համար սահմանել հետևյալ չափորոշիչները՝

- o գետեր, որոնք հանդիսանում են Էնդեմիկ՝ Հայաստանի Հանրապետության տարածքին բնորոշ, ձկնատեսակների ձվադրավայրեր կամ որոնց ջրհավաք ավազանում կան Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված ձկնատեսակներ,

- o գետեր, որոնց ծանրաբեռնվածությունը դերիվացիոն խողովակներով 40% և ավելի է,

- o գետահատվածներ, որոնց փաստացի ջրային հոսքը չի գերազանցում Էկոլոգիական թողքի մեծությունը,

- o ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման գոտիներ,

- o գետերի հոսքի ձևավորման տարածքներ,

- o բնության հուշարձանների 150մ շառավղով հարակից տարածքներ,

- o աղմուկի ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա: ¹⁶

13 <http://ecolor.org/en/news/energy/social-conflicts-available-in-small-hydropower-and-affected-communities-not-eliminated/9249/>

14 <http://www.sgp.am/en/Projects?id=72>, <http://www.sgp.am/en/Projects?id=60>

15 <https://www.e-draft.am/projects/240>

16 <https://www.e-draft.am/projects/182/about>

Եզրակացություններ

ՓՅԷԿ-երի կառուցումը առանց պատշաճ բնապահպանական և սոցիալական ուսումնասիրության և հանրային մասնակցության խախտում է հիմնարար մարդու իրավունքները ՓՅԷԿ ազդակիր համայնքներում՝ ջրի հասանելիության իրավունքը, սննդի իրավունքը, ապահով միջավայրում ապրելու իրավունքը, զարգացման և մասնակցության իրավունքները:

Բիզնեսը հաճախ շահագործում է այն փաստը, որ տեղի բնակիչները իրազեկված չեն իրենց իրավունքների մասին և առաջ է մղում իր շահերը: Հաճախ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները, որոնք միջևորդի դերակատարություն են տանում այս գործընթացներում, միգուցե չպաշտպանեն բնակիչների շահերը, այլ պաշտպանեն ՓՅԷԿ-երի սեփականատերերի շահերը: Փաստ է, որ սեփականատերերը իշխանությունների ազդեցիկ ներկայացուցիչներ են, ինչպես օրինակ պատգամավորներ և օլիգարխիկ ընտանիքների ներկայացուցիչներ: Այս մարդիկ մեծապես օժանդակում և ազդեցություն ունեն տեղական ընտրությունների ժամանակ: Հետևաբար, կարևոր է պետական մակարդակով ունենալ խիստ կանոնակարգեր, որը մի կողմից մշակված է քաղաքացիական հասարակության և ակադեմիական հանրության հետ համագործակցելով, իսկ, մյուս կողմից, բարձրացնում է տեղական համայնքների իրազեկվածությունը իրենց իրավունքների մասին և ամրապնդում կապերն ակտիվ ՀԿ-ների հետ, որոնք կարող են օգնել կազմակերպել տեղեկատվական քարոզարշավներ բնակիչների շահերի պաշտպանության համար և կգործեն իրենց իրավունքների խախտման դեմ՝ թույլ չտալ մասնակցել որոշումների կայացմանը բնական ռեսուրսների օգտագործման, սեփականության հափշտակման առումով և այլն:

Միայն միավորված համայնքը և քաղաքացիական հասարակությունը կարող է դիմակայել ոչ-կայուն պրակտիկաների ձևավորմանը, որոնք խախտում են համայնքի և նրա բնակիչների իրավունքները: Համայնքը պետք է կարողանա մասնակցել իմաստալից խորհրդակցություններին և նրանց ձայները պետք է լսվեն կենտրոնական և տեղական կառավարությունների կողմից: Քաղաքացիական հասարակությունը պետք է լինի տեղի բնակիչների հզոր գործընկերը որոշումների կայացման գործընթացում և օգնի նրանց պաշտպանել իրենց բնապահպանական իրավունքները:

Ամուլսարի ոսկու հանք

Նախաբան

«Lydian International» ընկերության Ամուլսարի ոսկու արդյունահանման ծրագիրը պետք է շահագործվի Հայաստանի կենտրոնում: Նախագծի փաստաթղթերի համաձայն, արդյունահանված հանքաքարը մշակվելու է ցիանիդի կիրառմամբ: 2009թ. հանքի շահագործման իրավունքը ստանալուց հետո շահագործող ընկերությունը փոփոխեց արդյունահանման ծրագիրը երկու անգամ՝ 2014թ. և 2016թ.:

Երկու դեպքում էլ նախագծի փոփոխման հիմնական դրույթը արդյունահանման ծավալի աճն էր: Բոլոր երեք նախագիծերն էլ հաստատվել է համապատասխան պետական մարմինների կողմից և բոլոր երեք դեպքերում էլ հանքի շահագործման իրավունք տրվել է 2009 թվականից ի վեր: Ներկային նախագծի տևողությունը հայտարարվել է 13 տարի, որի մեջ մտնում է երկու տարի շինարարական աշխատանքներ և 11 տարի հանքի ակտիվ շահագործում և վերամշակում, որին հաջորդում է հանքի փակումը:

Կարևոր փաստն այն է, որ ՎՉԵԲ-ը և ՄՖԿ-ն «Lydian International» ՓԲԸ-ի բաժնետերերն են և, ընկերության հայտարարության համաձայն, իրենց գործառնությունները հիմնված են ՄՖԿ-ի կատարողականության չափանիշների և ՎՉԵԲ-ի կատարողականության պահանջների հիման վրա: Այս երկու ֆինանսական հաստատությունների կողմից օրենքի գերակայությունը առաջնահերթություն է:

Ծրագրի ազդեցություն

2009թ. ընկերության կողմից պատրաստված Շրջակա միջավայրի ազդեցության գնահատումը (ՇՄԱԳ) չի համապատասխանում Հայաստանի ներպետական օրենսդրությանը, ոչ էլ ՄՖԿ-ի կամ ՎՉԵԲ-ի չափանիշներին: Չնայած Լիդիանի շահագործման իրավունքը տրված է, հանքարդյունաբերության վարվեցողության կանոնագիրքն ուղղակիորեն արգելում է հանքարդյունաբերական գործառնություններ հազվադեպ հանդիպող բույսերի բնօրրանում կամ երբ կենսաբազմազանության վտանգված տեսակները ռիսկի են ենթարկվում:

Այս նախագիծը նաև վտանգում է Լևանա լճի ջրային ռեսուրսները, ինչպես նաև Որոտան և Արփա գետերի ջրավազանները: Միևնույն ժամանակ, Սպանդարյանի և Կեչուտի ջրամբարները, թթվային դրենաժի կիրառման արդյունքում, վտանգում են Ամուլսար լեռան կենսաբազմազանությունը և

Գնդեվազ գյուղի բնակիչներին, որը ընկերության ցիանային հարթակից գտնվում է մեկ կիլոմետր հեռավորության վրա:

2009 թվականից ի վեր բնապահպանները և տեղի բնակիչները կազմակերպել են բազմաթիվ բողոքի ցույցեր և միջոցներ ձեռնարկել Երևանում և Ջերմուկում՝ ներառյալ քննարկումներ, քննադատական հոդվածներ, խնդրագրեր, ինչպես նաև ներկայացրել են բազմաթիվ բողոքներ ազգային դատական մարմիններ և միջազգային փոխհատուցման մեխանիզմներ կիրառող մարմիններ՝ ներառյալ Օրիուսի կոնվենցիա և Միջազգային ֆինանսական կորպորացիա (IFC CAO):¹⁷ Խնդիրներից մեկն այն է, որ ոսկու արդյունահանումը և վերամշակումը անուղղելի վնաս կպատճառի տարածաշրջանի բնապահպանությանը և տնտեսությանը, ինչպես նաև տեղի բնակիչների առողջությանը՝ ներառյալ Ջերմուկ քաղաքը, որը հանգստավայր է՝ հայտնի իր հանքային ջրերով: Միայն 2016թ. ՇՄԱԳ-ը ճանաչեց այս քաղաքը որպես ազդակիր տարածք:

Նախագծի ազդեցությունը ՀՀ օրենսդրության վրա

Ամուլսարի հանքարդյունաբերական ծրագրի ամենաբնորոշիչ հատկանիշներից մի քանիսը բնապահպանական օրենսդրության և հանքարդյունաբերական կանոնակարգերի իրավական փոփոխություններն են, որոնք ծառայում են կոնկրետ մեկ ծրագրի կոնկրետ կարիքներին: Օրենսդրական փոփոխությունների ամսաթվերը ամբողջովին համընկում են ծրագրի հանրային լուսման ամսաթվերի կամ ծրագրի փոփոխությունների ամսաթվերի հետ: ՀՀ կառավարության 781-Ն որոշումը «Հայաստանի հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին», որը դիտարկվում էր որպես հիմնական խոչընդոտ, փոփոխվել էր՝ թույլ տալով ընկերությանը տեղափոխել կենսաբազմազանության վտանգված բուսատեսակը ազգային պարկեր կամ բուսաբանական այգիներ որպես կենսաբազմազանության փոխհատուցում: Վերոնշյալ օրենսդրական փոփոխությունները իսկապես ազատեցին կառավարությանը հանքարդյունաբերման իրավունքը շնորհելու խոչընդոտից:

2015 թվականի մարտի 10-ի ՀՀ կառավարության թիվ 244-Ն որոշմամբ փոփոխություն մտցվեց ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 21-ի «Բաց եղանակով մշակվող օգտակար

հանածոների հանքավայրերի անվտանգ շահագործման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 51-Ն որոշման մեջ:¹⁸ Արդյունքում փոխվեց բաց հանքավայրերի շահագործման ավտոճանապարհների կառուցման նորմատիվները և Լիդիանին հրաշալի հնարավորություն ընձեռնվեց Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործման համար անհրաժեշտ ներդրումները նվազեցնել 100 միլիոն ԱՄՆ դոլարով՝ պարզապես փոփոխելով հանքի շահագործման տեխնիկական պարամետրերը: Նոր որոշման համաձայն, թույլատրելի թեքությունը դարձել է 10% նախկին 7%-ից:¹⁹ Ընկերությունը շեշտում է այս փոփոխության բնապահպանական օգուտները, որը կնվազեցնի հանքից հանվող դատարկ հանքաքարը, սակայն, ի վերջո, այս ծրագրի նպատակներն էր նվազեցնել ծրագրի գործառնական ծախսերը: Այս եզրակացությանը կարելի է նաև գալ հանքի արդյունաբերական գնահատումից, քանի որ գործառնական ծախսերը հաշվարկվում են երկրաբանական հետախուզության ընթացքում:

Խոչընդոտներ մասնակցության իրավունքի և արդարադատության մատչելիության առումով

Մասսական տեղական բողոքի ցույցեր են կազմակերպվել ծրագրի իրականացման դեմ՝ պլանների մասին հայտարարելուց ի վեր: Տեղական համայնքները դեմ կանգնեցին հանքին և հաստատակամորեն պնդեցին իրենց կարծիքը հանրային լուսման ժամանակ: Նրանք հրաժարվում են վաճառել իրենց հողատարածքները՝ ներկայացնելով բողոքներ և հավաքելով ստորագրություններ ծրագիրը կանգնեցնելուն ուղղված բազմաթիվ պահանջագրերի տակ:

2014թ. «Էկոիրավունք» և «ԷկոԴար» ՀԿ-ները, ինչպես նաև Վայոց Ձոր մարզի Գնդեվազ համայնքի 12 բնակիչ հայց ներկայացրեցին՝ վիճարկելով 2014թ. շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականի (ՇՄԱԳ) փորձաքննական դրական եզրակացության և մի շարք վարչական ակտերի օրինականությունը:

Սակայն, 2016թ. խումբը ստիպված էր հաղորդում ներկայացնել Օրիուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեին (ՕԿՀԿ), քանի որ առկա էր Հայաստանի կառավարության և դատարանի կողմից կոնվենցիայի դրույթների մշտապես և ամբողջապես չիտեսնելու հիմնարար խնդիր: Հաղորդման մեջ կառավարությունը մեղադրվում էր արդարադատության

18 2015 թվականի մարտի 10-ի ՀՀ կառավարության թիվ 244-Ն որոշում

19 Հղված www.media.com վեր պորտալում, "Lydian shares pop after Armenia's USD 100m gift" <http://www.mining.com/lydian-shares-pop-armenias-100m-gift/>

17 http://www.cao-ombudsman.org/cases/case_detail.aspx?id=221

հասանելիության իրավունքի մերժման մեջ պետական մարմնի կողմից հանրային մասնակցության արդյունքի չըննարկման համար: Միևնույն ժամանակ, ՀՀ վարչական դատարանը մերժեց հանրային մտահոգության առարկա հանդիսացող դիրքորոշումը պաշտպանելու հնարավորությունը կապված պետական իշխանությունների ներկայացված Ամուլսարի ծրագրին առնչվող իր մեկնաբանությունների ընդունելիության և ամբողջականության հետ:

Պետք է նշել, որ Օրիուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեն արդեն իսկ հրապարակել է երեք հաղորդում Հայաստանի անհամապատասխանելիության վերաբերյալ Օրիուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի համաձայն: Առաջին հաղորդումը ընդունվել է 2006թ. մարտին, իսկ երկրորդը 2008թ. հունիսին արդեն իսկ հաստատվել է Կողմերի հանդիպման ժամանակ: Երրորդ հաղորդումը միևնույն շարադրամբ ներկայացվել է 2017թ. սեպտեմբերին համապատասխանության կոմիտեի հանդիպմանը և կառաջարկվի 2018թ. կայանալիք Կողմերի հանդիպմանը:

Այնուամենայնիվ, 2017թ. ուժի մեջ մտած հասարակական կազմակերպությունների մասին նոր օրենքը և Հայաստանի հանրապետության վարչական օրենսդրությունը սահմանափակում է բնապահպանական ՀԿ-երի հայց ներկայացնելու իրավունքները կապված պետական իշխանությունների՝ բնապահպանական հարցերով ենթադրյալ խախտումների հետ, որը լիովին հակասում է սահմանադրությանը:

Արդյունքում, 2017թ. օգոստոսին Ամուլսարի հանքավայրի գործով հայցվոր հանդիսացող «Էկոլոգիական իրավունք» և «Էկոդար» հասարակական կազմակերպությունները դուրս մնացին դատական գործընթացից և դատաքննությունը շարունակվում է միայն ֆիզիկական անձանց մասով:

Բողոք ՄՖԿ Օմբուդսմենի գրասենյակ

ՄՖԿ-ի Օմբուդսմենի գրասենյակ ներկայացվել է երկու բողոք Գնդեվազ գյուղի և Ջերմուկ քաղաքի մի քանի քաղաքացիների, ինչպես նաև բնապահպանական ՀԿ-ների կողմից: Դիմումատուները մտահոգված էին ՇՄՍԱԳ-ի անհամապատասխանությամբ և տեղի ջրավազանների վրա ծրագրի ազդեցությամբ, Էկոլոգիական աղտոտվածությամբ, մարդկանց ապրուստի, առողջության վրա ազդեցությամբ և այլն: Բողոքների քննարկման մի շարք փուլերից հետո, երկու փուլերը միացվել են իրար և համատեղելիության հետաքննական հաշվետվությունը հրապարակվել է 2017թ. օգոստոսին: Հետաքննությամբ

պարզվեց, որ ՄՖԿ-ի նախաներդրումային ուսումնասիրությունը համաչափ չէր հանքի շահագործման փուլի հետ կապված ռիսկերի հետ: Չնայած այն փաստին, որ ՄՖԿ-ի կողմից ծրագրի վերահսկողությունը հանգեցրել է հաճախորդի կատարողականության զգալի բարելավմանը, որն արտացոլվում է հետախուզական փուլի մշակմամբ, բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգով և միջազգային չափանիշների շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատմամբ (ՇՄՍԱԳ), հետաքննությունը, այնուամենայնիվ, գտավ մի շարք թերություններ՝ ներառյալ տեղական զբոսաշրջության վրա ազդեցությունների պատշաճ գնահատման պակասը տուրիստական Ջերմուկ քաղաքում և ազդեցությունը մոտակայքում գտնվող Գնդեվազ համայնքի վրա:

ՄՖԿ-ի Օմբուդսմենի գրասենյակը դեռ չի փակել գործը և պլանավորում է մշտադիտարկել ՄՖԿ-ի ղեկավարության պատասխանը, որը ստացվել է 2017թ. հուլիսին: Այնուամենայնիվ, չնայած իր պատասխանին որ ՄՖԿ-ն բազմաթիվ ներդրումներ է արել Լիդիանի Ամուլսար ծրագրում 2007թ. և 2018թթ., ՄՖԿ-ն «...իրաժարվել է Լիդիանի իր ներդրումից» չնայած այն կարծիքի, որ «... Ամուլսարի ծրագրի կայուն զարգացումը ունի ներուժ Հայաստանի տնտեսական աճին նպաստելու համար»: Հետևաբար, պարզ չէ, թե ինչպես է ՄՖԿ-ի Օմբուդսմենի գրասենյակը մշտադիտարկելու իր հանձնարարականների իրականացումը:

Քաղված դատեր և եզրակացություններ

Պետական պաշտոնյաները ազդել են հանքարդյունաբերական ոլորտի օրենսդրական շրջանակներ վրա հօգուտ հանքարդյունաբերական ընկերությանը՝ Ամուլսար ծրագրի, ընդդեմ հանրային շահերի: Հաճախակի և հայեցողական օրենսդրական միջամտությամբ կառավարությունը վճռականորեն ազդել է որոշումների կայացման գործընթացի վրա:

Այսպիսի խտրականությունը բացասաբար է ազդում մարդու իրավունքների վրա, որոնք ազդվում են կայացած որոշումներից, վնաս են կրում պետական պաշտոնյաների պարտականությունների չարաշահումից, որոնք հետամուտ են հանքարդյունաբերական ընկերությունների մասնավոր շահին հանրային շահի փոխարեն և որը պարունակում է կոռուպցիոն մեծ ռիսկեր:

Անտեսելով և չիրականացնելով ԱԿՀԿ-ի հանձնարարականները՝ ապահովելով քաղաքացիների իրավունքները շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության,

որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության եվ արդարադատության մատչելիության առումով, վտանգի է ենթարկում մարդու իրավունքները և օրենքի գերակայությունը Հայաստանում:

Ծրագրերում կատարված հսկայական ներդրումները առանց զգալի հասարակական աջակցության կարող են հանգեցնել կոնֆլիկտների աճի տվյալ տարածքում՝ սահմանափակելով ՔՀԿ-ների տարածքը, ինչպես տեղի ունեցավ Ամուլսարի դեպքում:

Վրաստան

ԵՄ ֆինանսավորվող զարգացումը Վրաստանում Ներածություն

Սույն կոնկրետ օրինակի ուսումնասիրությունը ընդգծում է ԵՄ-Վրաստան համատեղ ծրագրերի գործընթացը 2017-2020 թվականների համար: Այն ցույց է տալիս, որ բոլոր շահառուների համապարփակ և վաղ շրջանում ներառելը (ներառյալ բնապահպանական իշխանություններ, սոցիալական գործընկերներ և քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, օրինակ՝ բնապահպանության ոլորտում) Վրաստանի տրամադրվող ԵՄ և ԱՊ աջակցության պլանավորման գործընթացում կարող է կարևոր դեր խաղալ և մեծացնել հետագա ֆինանսավորման որակը և արդյունավետությունը:

Բնապահպանական գործընկերների ներգրավումը կարող է ապահովել եզակի փորձագիտական գնահատական կայունության հարցերում՝ աջակցելով բնապահպանական պահանջների ինտեգրմանը ամենասկզբից: ԶԻԿ-ի ներգրավումը համատեղ ծրագրերի փաստաթղթերի մշակմանը նաև մեծացնում է նրանց պարտավորվածությունը և սեփականության զգացումը, աջակցում է կայուն զարգացման սկզբունքների հիմնուղի դառնալուն և ծրագրի արդյունավետ իրականացմանը, ինչպես նաև ապահովում է թափանցիկությունը որոշումների կայացման գործընթացներում և կանխում է խաբեությունը և հարկատուների գումարի սխալ գործածումը: Ի վերջո, այն ծառայում է որպես ԵՄ-Վրաստան ասոցացման համաձայնագրի բարեհաջող իրականացման ամենակարևոր գործիքներից մեկը:

Միասնական աջակցության շրջանակ Վրաստանի համար 2017- 2020 թթ. և համատեղ ծրագրեր

Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքը տրամադրում է նոր մոտեցում համատեղ ծրագրերի մշակմանը, որը ԵՄ անդամ պետությունների և Շվեյցարիայի համատեղ նախաձեռնություն է (EU+)՝ նպատակ ունենալով առավել լավ համակարգել և համապատասխանեցնել աջակցության ծրագրերը միասնական աջակցության շրջանակի միջոցով:

2016թ. հոկտեմբերին՝ Վրաստանի կառավարության հետ բազմակողմանի խորհրդակցություններից հետո, Եվրոպական հանձնաժողովը հրապարակայնացրեց համատեղ ծրագրերի մշակման նախնական փաստաթղթերը: Համատեղ ծրագրերի մշակումը կառուցված է Կառավարության վեց դոկորային համակարգման ոլորտների հիման վրա՝

- o հանրային կառավարում,
- o օրենքի գերակայություն և արդարադատություն,
- o տնտեսական աճ,
- o մարդկային կապիտալ,
- o սոցիալական բարեկեցություն,
- o բնական ռեսուրսների կայուն օգտագործում:

Յուրաքանչյուր սեկտոր պարունակում էր տվյալ սեկտորի հակիրճ վերլուծությունը՝ լավարկելով ԵՄ ընթացիկ անդամ պետությունների և Շվեյցարիայի միջամտությունները և սահմանելով ընդհանուր նպատակներ և առաջնահերթություններ հետագա աջակցության համար: Չնայած այս ռեզյումեները պարտադիր իրավաբանական ուժ չունեին, այն նախատեսվում էր սահմանել շրջանակ, որի սահմաններում ԵՄ անդամ պետությունները և Շվեյցարիան պլանավորում են աշխատել: 2017-2020թթ Վրաստանի համար միասնական աջակցության շրջանակի նախագծի հրապարակայնացումը ծառայում է մի շարք հանրային խորհրդակցությունների սկզբնակետ:

«Բնական ռեսուրսների կայուն գործածում» ռեզյումեում բացահայտված խնդրահարույց հիմնախնդիրներ.

Փաստաթղթի առաջին տարբերակը ընդգծում է այն պահանջները, որոնք պետք է կատարեն դոկորները 2017-2020 թվականների ընթացքում: Այն առանձնացնում է այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են Էներգետիկ անկախություն, բնապահպանություն, ջուր, թափոն, կլիմա, կենսաբազմազանություն և բնական աղետներ:

Այնուամենայնիվ, փաստաթուղթը ներառում է մի շարք հակասական և վիճարկելի ենթադրություններ Վրաստանում հիդրոէներգետիկայի ներուժի զարգացման առումով: Մեծ առաջնահերթություն է տրվում «...Վրաստանի հիդրոէներգետիկ ռեսուրսների ներուժի սանձազերծմանը», քանի որ, համաձայն փաստաթղթի, Վրաստանը մեծ կախում ուներ ձմռանը Էներգիայի ներմուծումից: Ավելին, ընդունվել էր, որ «ԶԷԿ-երի կողմից արտադրված էլեկտրականությունը զգալիորեն ազդեցություն է ունենում ձմռանյին ժամանակաշրջանում»: Հետևաբար, պարզ չէր, թե ինչպես հիդրո-էներգետիկայի հետագա զարգացումը կարող էր հավանականորեն նպաստել երկրի

Էներգետիկ խառնուրդի դիվերսիֆիկացմանը և նվազեցնել Էներգիայի ներմուծումը ձմռանը, եթե հիդրոէներգետիկայի արտադրումը զգալի ազդեցության է ենթարկվում ձմռանյին ամիսներին: Անհրաժեշտ է շեշտել, որ փաստաթուղթը ընդգծում է Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության օրենսդրության և պրակտիկայի հզորացման անհրաժեշտությունը՝ ճանաչելով ՅԷԿ-երի կառուցման երկմտելի բնապահպանական, սոցիալական և տնտեսական ազդեցությունները: Մյուս կողմից, փաստաթուղթը չի անդրադառնում Էներգետիկայի ազգային ռազմավարության և Էներգետիկ կարիքների գնահատման պակասին գումարած մի շարք այլ ռազմավարական հաշվետվություններին, որոնք կարող էին վճռել, թե ինչպես հիդրոէներգետիկայի զարգացումը կարող է նվազեցնել Էներգետիկ կախվածությունը և համապատասխանել այլ վերականգնվող Էներգիայի, Էներգախնայողության և պահպանման այլընտրանքների հետ:

2017-2020թթ Վրաստանի համար միասնական աջակցության շրջանակի նախագիծը ընդգծում է 280 մեգավատանոց Նենսկրա ՅԷԿ նախագիծը որպես բարձր առաջնահերթություն ունեցող նախագիծ՝ ձմռանյին ամիսներին այդպես կոչված Էներգետիկ դեֆիցիտի հարցը լուծելու նպատակով: Վրաստանի Էներգետիկ ոլորտի այլ, առավել կարևոր առաջնահերթություններ, ներառյալ՝ Էներգախնայողությունը և նոր վերականգնվող ռեսուրսների զարգացումը, մեծամասամբ անտեսված էին: Այս փաստաթղթի հիման վրա պլանավորվում էր գումար հատկացնել ԵՄ հարևանության ներդրումների հիմնադրամից Նենսկրա ՅԷԿ-ի համար:

Վրաստանի Էներգետիկ ոլորտի գնահատում

Մինևույն ժամանակ Վրաստանում մատակարարված առաջնային Էներգիայի մոտ 70%-ը ներմուծվում է նավթի և գազի տեսքով, Էներգիայի 20%-ը առաջանում է ՅԷԿ-ի կողմից արտադրված էլեկտրաէներգիայից, մինչդեռ սպառման 15%-ը վառելիքային է: Երկիրը մեծապես կախված է ներմուծված բրածո վառելանյութից, որը երկրին դնում է տնտեսական և քաղաքական կախվածության մեծ ռիսկերի առջև: Մինչդեռ Վրաստանը սպառում է վեց անգամ քիչ Էներգիա ըստ շնչի, քան Նորվեգիան և Ֆինլանդիան և երկուսուկես անգամ ավելի քիչ, քան Յունաստանը: Սակայն Վրաստանը օգտագործում է չորսուկես անգամ ավելի շատ Էներգիա ըստ ՅՆԱ արտադրության միավորի քան այդ երկրները, չնայած Վրաստանի տնտեսությունը և բնակչությունը սպառում են ավելի քիչ Էներգիա, այս սպառումը շատ անարդյունավետ է:

Հաշվարկվել է, որ ծախսախնայող և Էներգախնայող միջոցները (շիկացման լամպերի փոխարինումը քիչ Էներգիա ծախսող լամպերով, շինությունների մեկուսացումը, ավտոտրանսպորտային միջոցների անցումը գազի սպառմանը, Էներգաարդյունավետ վառարանները, նոր տեխնոլոգիաները, ցերեկային լուսի խնայման ժամանակի ներմուծումը) հնարավոր կդարձնեն նվազեցնել Էներգիայի սպառումը մոտավորապես 25%-ով, կբարելավեն Էներգախնայողությունը, կնվազեցնեն կախվածությունը ներմուծված բրածո վառելանյութերից և հավանաբար կխնայեն հարյուր միլիոն դոլար:²⁰ Վրաստանը զգալի ներուժ ունի ջերմոցային գազերի արտանետումները նվազեցնելու առումով՝ բարելավվել Էներգախնայողությունը և մեծացնելով վերականգնվող Էներգառեսուրսների՝ մասնավորապես քամու Էներգիան և հիդրոէներգետիկան: Բացի այդ, դա կօգնի Վրաստանին կրճատել Վրաստանի կախվածությունը վառելանյութի ներմուծումից՝ այսպիսով նպաստելով Էներգետիկ անվտանգության աճին:

Անվտանգության բարձր մակարդակին հասնելը կարևոր նպատակ է: Անցկացված հետազոտությունը, որի նպատակն էր վերլուծել Վրաստանի կարճաժամկետ Էներգետիկ անվտանգությունը ՇՄԱԳ ԿԷԱՄ-ի միջոցով (Կարճաժամկետ Էներգետիկ անվտանգության մոդել), պարզաբանում է, որ անվտանգության ամենամեծ ռիսկը կապված է բնական գազի մատակարարման հետ՝ դիվերսիֆիկացիայի տարբերակի պակասի և այն փաստի պատճառով, որ «գազի սպառումը Վրաստանում ըստ ՅՆԱ միավորի 57 անգամ ավելի բարձր է, քան ԵՄ զարգացած երկրներում գազի բնակելի սպառման մեծ չափաբաժնի և արդյունաբերական սպառման ցածր արդյունավետության պատճառով»:²¹ Մեկ այլ բարձր ռիսկ կապված է կենսամասսայի գերօգտագործման և ապօրինի բերքահավաքի հետ, որը պետք է «աստիճանաբար նվազեցվի անտառտնտեսության բարեփոխումների, Էներգախնայողության և այլընտրանքային վառելանյութերի համակցման միջոցով»:²² Ուսումնասիրության համաձայն, «հիդրոէներգետիկան ունի ցածր տարեկան փոփոխականություն՝ համեմատած այլ հիդրոէներգետիկայի դոմինանտություն չունեցող երկրների հետ և կարող է դիտարկվել որպես համեմատաբար վստահելի Էներգիայի աղբյուր»:²³

Մինևույն ժամանակ, Վրաստանի կառավարությունը եռանդազին խթանել է երկրի

20 World Experience Georgia, www.weg.ge

21 <http://weg.ge/en/short-term-energy-security-assessment-georgia-international-methodology>

22 Տես նույն տեղում

23 Տես նույն տեղում

հիդրոէներգետիկայի ներուժը վերջին տարիներին, որպես էներգետիկ անվտանգության խնդրի լուծման հիմնական ուղղություն: էներգետիկայի նախարարությունը ներդրել է 120 հիդրոէլեկտրակայանի (ՅԷԿ) սխեմաներ Վրաստանում: Սակայն երկրում դեռ պակասում է էներգետիկայի զարգացման հիմնական ծրագրային փաստաթղթերը, հիդրոէներգետիկայի ոլորտի ռազմավարական բնապահպանական գնահատումը, ծախքի և օգուտի վերլուծությունը և գետի ավազանի կառավարման պլանները:

2014թ. ԵՄ-Վրաստան Անցացման համաձայնագրի ստորագրումից և կնքումից ի վեր՝ կառավարությունը պարտավորվում է բարեփոխել էներգետիկ և բնապահպանական ոլորտները և այն մոտավորեցնել ԵՄ դիրեկտիվաների օրենսդրության հետ: Այդ պահից ի վեր էներգետիկայի նախարարությունը հապճեպ կոնցեսիաներ տվեց 84 ՅԷԿ-ին որպես պոտենցիալ ներդրումային հնարավորություններ՝ առանց ազգային կանոնակարգող գործակալության ներգրավման: 2016թ. Վրաստանը միացավ Եվրոպայի էներգետիկ դաշնագրին, որը պարտավորեցնում էր կառավարությանը մեծացնել թափանցիկությունը և ժողովրդավարական վերահսկումը: Հիդրոէլեկտրակայանների և օժանդակ շինությունների կառուցումը (օրինակ՝ բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծեր), որոնք մեծապես ֆինանսավորվել են Եվրոպական և/կամ անդամ պետությունների հաստատությունների կողմից (ինչպես օրինակ՝ ՎՉԵԲ, KFW, ԵՆԲ և այլն) ամբողջ երկրով մեկ ազդակիր համայնքների ակտիվ ցույցերի պատճառ դարձան: Կառավարությունը խթանում է և՛ փոքր, և՛ միջին չափի ՅԷԿ-երը, ինչպես նաև մեծ ամբարտակների նախագծերը, ինչպես օրինակ 702 մեգավատ հզորությամբ Խուդոնի ՅԷԿ-ը, 433 մեգավատ հզորությամբ Նամախվանի ՅԷԿ-երի կասկադը և 280 մեգավատ հզորությամբ Նենսկրա ՅԷԿ-ը: Նենսկրա նախագիծը կառավարության կողմից ճանաչվել է որպես երկրի համար բարձր առաջնահերթություն ունեցող նախագիծ՝ փորձելով ձեռք բերել շինարարության համար անհրաժեշտ ֆինանսները միջազգային ֆինանսական հաստատություններից, ներառյալ՝ ՎՉԵԲ, ԵՆԲ, Իտալական SACE ֆինանսավարկային ընկերությունը և այլն:

Նենսկրա նախագծի համար ԵՄ քաղաքական աջակցությունը ապահովելու համար կառավարությունը առաջարկեց ինտեգրել Նենսկրա ՅԷԿը 2017-2020թթ ԵՄ-Վրաստան համատեղ ծրագրերի շրջանակում որպես ռազմավարական նախագիծ: Նենսկրա ՅԷԿ-ը ներկայացնում է պետականի և մասնավորի գործընկերությունը պետական գործընկերության հիմնադրամի և Կորեայի «K-Water» պետական գործակալության միջև: Ի

հակադրություն Վրաստանում առկա պրակտիկայի, ՅԷԿ-ի պայմանագիրը երբեք հասանելի չի եղել հանրության համար, կառավարությունը երբեք ապացույցներ չի ներկայացրել դրա ռազմավարական կարևորությունը հիմնավորման համար: Ծրագրի ազդակիր համայնքները պայքարում են ծրագրի դեմ վատ հանրային մասնակցության և հարակից երկրաբանական ռիսկերի հետ կապված մտահոգությունների, հողերի ձեռք բերման և ապրուստի վրա ազդեցության պատճառով:

Հանրային մասնակցությունը 2017-2020թթ Վրաստանի միասնական աջակցության շրջանակի շուրջ

ԵՄ պատվիրակության և տարբեր ոլորտների ԶԻԿ-ների միջև հանրային խորհրդակցություն-հանդիպումների երկու փուլերի (2016թ. նոյեմբեր և 2017թ. փետրվար) արդյունքում 2017-2020թթ միասնական աջակցության շրջանակը ենթարկվում է մի շարք դրական փոփոխությունների:

Հանրային խորհրդակցությունը անցկացվել է այնպես, որ այն մանրամասն քննարկում է համատեղ ծրագրերի փաստաթղթի տարբեր ոլորտները շահագրգիռ ԶԻԿ-ների հետ, ինչպես նաև ներկայացնում է գրավոր հետադարձ արձագանք պատվիրակությանը:

Բազմաթիվ փոփոխությունների թվում «2017-2020թթ. Վրաստանի միասնական աջակցության շրջանակ»-ի վերջնական տարբերակը՝ հրապարակված 2017թ. մարտին²⁴, պարտավորվում է, որ «էներգետիկ անկախության մեծացումը երկրառազմավարական անհրաժեշտություն է, որին պետք է սատարել էներգետիկ ոլորտի բարեփոխումների միջոցով՝ ԵՄ ինտեգրման գործընթացի և վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործման հետ համատեղ»: Այն շեշտում է, «բնական ռեսուրսների կայուն գործածումը (կայուն արտադրություն և սպառում, բնապահպանություն և ճկունություն, էներգիայի և ռեսուրսների արդյունավետություն) և շրջանաձև տնտեսությունը (կանաչ տնտեսության հետ միասին) դեռևս վատ են գործում Վրաստանում»:

Առաջնահերթությունների թվում է «Անցացման համաձայնագրից, էներգետիկայի համայնքային դաշնագրից²⁵, ինչպես նաև Կլիմայի փոփոխության մասին Փարիզի համաձայնագրից բխող պարտավորություններ»-ին աջակցելը:

24 Ընդունվել է 2017թ. հուլիսի 13-ին http://ec.europa.eu/transparency/regcomitology/index.cfm?do=search.documentdetail&Dos_ID=14731&DS_ID=51944&Version=2

25 Ներառյալ՝ «էներգաարդյունավետություն», «վերականգնվող էներգիա» գործողությունների պլանները և ԵՄ մշտադիտարկման մեխանիզմի կանոնակարգը:

Չնայած Համատեղ ծրագրերի փաստաթուղթը չի բացառում հիդրոէներգետիկան, այն այնպիսի առաջնահերթություն չի սահմանում Նենսկրա նախագծի համար, որ բավարար լինի արժանանալու ԵՅԳ բյուջեի աջակցությանը և պահանջում է, որ շրջակա միջավայրի գնահատումները (ՇՄԱՌԳ կամ ՇՄԱԳ) «իրականացվեն ԵՄ չափանիշների համաձայն», որը նաև որպես երաշխիք կծառայի հիդրոէներգետիկայի ազդակիր համայնքների համար, ինչպես նաև կնվազեցնի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Ընդհանուր առմամբ, Վրաստանի Էներգետիկ ոլորտի առկա հետազոտության հետ համատեղ Համատեղ ծրագրերի փաստաթուղթը աշխատում է «ուժեղացնել Էներգետիկ արդյունավետությունը և մեծացնել Էներգետիկ անկախությունը... Էներգետիկ ոլորտի բարեփոխումների միջոցով Էներգետիկ արդյունավետության բարելավման խթանումը, վերականգնվող Էներգիայի չօգտագործված ռեսուրսների օտագործումը և խթանելով ներդրումներ քիչ արտանետում ունեցող տեխնոլոգիաներում:»

Քաղված դասեր և եզրակացություններ

Տեղեկացված և իմաստալից հանրային մասնակցությունն արդյունավետ գործիք է ինտեգրելու հանրային մտահոգությունները փաստաթղթերի վերջնական տարբերակներում: Այսպիսով, կայուն զարգացում ապահովելու համար տեղեկատվության հասանելիությունը հանրության համար և իմաստալից հանրային մասնակցությունը եական քայլեր են: Բնականաբար, ոչ միայն հանրային մասնակցությունն է ապահովում կայուն զարգացում, բայց փորձը ցույց է տալիս, որ որքան բաց են քաղաքական գործընթացներն ու պետական իշխանությունները հանրային մասնակցության նկատմամբ, այնքան ավելի շատ հնարավորություններ է այն տրամադրում բնապահպանական և զարգացման հիմնախնդիրների ինտեգրման համար:

Վրաստանի օրենսդրության համաձայն առկա է Վրաստանի պլանների և ծրագրերի հաստատված և կոնկրետ պրակտիկա, չնայած քաղաքականության փաստաթղթերի մշակման պրակտիկան ավելի քիչ է: Արդյունքում, նման փաստաթղթերը մշակվում են վարչական մարմինների կողմից (դոկորների աջակցությամբ), խորհրդակցությունները հաճախ տեղի են ունենում շահագրգիռ մարմինների և այլ շահառուների միջև նախապատրաստման գործընթացում, որոնք ի վերջո հաստատվում կամ մերժվում են տարբեր օրենսդրական ակտերով (օրինակ՝ նախագահի կամ կառավարության հրամաններով կամ տարբեր պետական իշխանությունների կայացրած ակտերով):

Անհրաժեշտ է նշել, որ 2016-2017 թթ. ԵՄ-Վրաստան համատեղ ծրագրերի գործընթացը իրենից ներկայացնում է հստակ օրինակ, թե ինչպիսի տեսք ունի իմաստալից հանրային մասնակցությունը, որտեղ ԶՀԿ-ների և կառավարությունների դիրքորոշումներին հավասարապես են վերաբերվում և վերջնական որոշումը կայացվում է համապարփակ խորհրդակցությունների արդյունքում: Հետևաբար, չափազանց կարևոր է, որ ԵՄ-ի կողմից հաստատված կամ օգտագործվող պրակտիկաները, որոնք հետագայում տարածվում են պետական իշխանությունների և այլ դոկոր կազմակերպությունների օգտագործման համար, պետք է ապահովեն՝

- o Բոլոր շահառուների մասնակցությունը որոշումների կայացման նախնական փուլում, որտեղ դեռ հնարավոր է զգալի փոփոխություններ կատարել,

- o Խելամիտ ժամկետներ հանրային մասնակցության համար,

- o Տեղեկատվություն մասնակցության հնարավորությունների մասին պետք է արդյունավետ կերպով տրամադրվի հանրությանը, որը նշանակում է, որ որոշումների կայացման գործընթացում ներգրավվելու հնարավորությունների մասին հանրային իրազեկումը պետք է հասնի բոլոր շահառուներին,

- o Հանրությունը պետք է հնարավորություն ունենա ներկայացնել զրավոր մեկնաբանություններ,

- o Շահառուների կողմից ներկայացված կարծիքների/մեկնաբանությունների պատշաճ քննարկում:

Մասնակցություն Վրաստանի Էներգետիկ ոլորտում որոշումների կայացման գործընթացին

Ներածություն

Վերջին տասնամյակի ընթացքում Վրաստանի կառավարությունը հիդրոէներգետիկան դիտարկում է որպես Էներգետիկ անվտանգության լուծման տարբերակ և երկիրը դարձնում է տարածաշրջանային Էներգետիկ խաղի մասնակից: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ), Համաշխարհային բանկը (ԿԲ), Միջազգային ֆինանսական կորպորացիան (ՄՖԿ), Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ) և KFW զարգացման բանկը (KFW) այս հիդրոբուժի հիմնական կատալիզատորներն

են: Այնուամենայնիվ, միջազգային ֆինանսական հաստատությունների ներկայությունը բավարար չեն ապահովելու համապարփակ էներգետիկ ռազմավարությունների զարգացումը, աշխատատար ծրագրերի գնահատումը և իմաստալից հանրային խորհրդակցությունները:

Ներկայումս Վրաստանում պլանավորված են առավել քան 114 ՅԷԿ, ներառյալ՝ 11 ջրամբարտակ և մի շարք բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծեր նախատեսված մինչև 3000 մեգավատ դրվածքային հզորությամբ շինարարության համար: Պլաններով նախատեսված են չափազանց հակասական ջրամբարտակների մեծ կասկածներ հիմնականում Վրաստանի լեռնային տարածքներում, ներառյալ՝ Խուդոնի ՅԷԿ (702 ՄՎ դրվածքային հզորություն, տարեկան արտադրություն՝ 1.5 տՎժ Էնգուրի գետի վրա), Նամակվանի կասկադ (433 ՄՎ, տարեկան արտադրություն՝ 1.5 տՎժ), Նենսկրա կասկադ (280 ՄՎ, 1.2 տՎժ): Պլանները նաև ներառում են դերիվացիոն տիպի նախագծեր, ինչպես օրինակ Փարավանի (87 ՄՎ, տարեկան արտադրություն՝ 450,746 գՎժ), Դարիալի ՅԷԿ (109 ՄՎ) և այլն: Տասնյակ այլ կայաններ նույնականացվել են որպես պոտենցիալ ներդրումային հնարավորություններ՝ հանգեցնելով իրար հակասող նախագծերի անորոշ խառնուրդի, որոնք կարող են չափից ավելի բեռ դառնալ շրջակա միջավայրի և մարդկանց ապրուստի համար:

Կառավարության կողմից ծախքի և օգուտի վերլուծության, շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատումների անհրաժեշտության մերժումը, որ գործում է ապահովելու պլանավորված էներգետիկ նախագծերը ցանկացած միջոցով, ներառյալ՝ ոստիկանական հարձակումներ, խտրականություն և ընդդիմադիրների մարզինալիզացիա, վնասում է հանրության կարողությանը իմաստալից մասնակցություն ունենալ բնապահպանական որոշումների կայացման գործընթացներում գրեթե բոլոր էներգետիկ նախագծերում: Ի վերջո, ամբողջ Վրաստանում ազդակիր համայնքները կազմակերպում են բողոքի ցույցերի շարժումներ նախագծերի դեմ:

Մինևույն ժամանակ, իրականացված ծրագրերն ունեն բազմաթիվ խնդիրներ (շինարարության ուշացում, սողանքների միջամտություն, փլված թունելներ և այլն)՝ ցածրորակ ՇՄԱԳ-երի և պետության կողմից գրեթե ամբողջական վերահսկողության բացակայության պատճառով: Այդ ամենը ներառում է ամբողջ հիդրոէներգետիկան, ՅԷԿ-երը, ներառյալ այն ՅԷԿ-երը, որոնք 2010-2017թթ կառուցվել են միջազգային ֆինանսական հաստատությունների աջակցությամբ: Բացի այդ, շատ ավելի շատ հարցեր են բարձրացրել փորձագետները և միջազգային կազմակերպությունները այդ

նախագծերի՝ Վրաստանի էներգետիկ ոլորտի զարգացման ապագայի վրա ազդեցության, էներգետիկ անվտանգության և բնակչության համար մատչելիության առումով:

Պլանավորման խնդիրները էներգետիկ ոլորտում

Վրաստանի էներգետիկ ոլորտը որոշ խնդիրներ ունի 2017թ. ընդհանուր սպառումն երկրում հավասար է նավթի համարժեքի 4631 կիլոտոննայի (ԼՅԿՏ, որտեղ մատակարարված առաջնային էներգիայի 82%-ը ներմուծվում է, ընդհանուր սպառման 75%-ը կազմում է նավթը և գազը (54 % բնական գազ և 36% նավթային պրոդուկտներ²⁶), էլեկտրականության 15%-ը արտադրվել է տեղական մակարդակում (հիմնականում հիդրոէներգետիկա), մինչդեռ ընդհանուր սպառման 10%-ը կազմել է վառելիքայտը: 2017թ. հետ համեմատած միտում է նկատվում դեպի նավթի և գազի պրոդուկտների ներմուծման աճ:

Սակայն Վրաստանը չունի էներգետիկ ոլորտի համապարփակ ռազմավարություն, որը կզբաղվեր էներգետիկ հավասարակշռության թերություններով և կնույնականացներ դրանց հաղթահարման պլանները և ոչ էլ ունի էներգետիկ ոլորտի զարգացման հստակ և ակտուալ թիրախներ: Էներգետիկ ոլորտի զարգացման հիմնական ուղղությունը դեռևս հիմնված է ցանկացած միջոցով գեներացման օբյեկտների պահպանությամբ, ներառյալ՝ անցած դարում Սովետական կառավարության կողմից մերժված նախագծերի վերակենդանացմամբ:

«Վերականգնվող էներգիա 2008» նոր ծրագիրը²⁷ հայտարարվել է էներգետիկ ոլորտի զարգացման առաջնահերթություն: Այս ծրագրի նպատակը երկակի է. ապահովել էներգետիկ անվտանգություն էլեկտրաէներգիայի արտահանման աճի միջոցով թուրքական, իսկ այնուհետև հարավարևելյան եվրոպական շուկաներից մինչև 2015-2017թթ: Ծրագիրը ներառում է բազմաթիվ ՅԷԿ-եր մինչև 100 ՄՎ հզորությամբ և բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծեր՝ գրավելու ներդրողներին «Կառուցում, Տիրապետում, Շահագործում» սկզբունքների համաձայն: Մինևույն ժամանակ, 100 ՄՎ հզորությունից բարձր ՅԷԿ-երի սարքավորումների ընտրման և զարգացման կանոնները և ընթացակարգերը եղել են Վրաստանի կառավարության բացառիկ հայեցողության ներքո: Չնայած վերականգնվող էներգիան

26 <https://www.iea.org/statistics/statisticssearch/report/?country=Georgia&product=balances>

27 Վրաստանի կառավարության Թիվ 107, Վերականգնվող էներգիա 2008-ի որոշումը հաստատեց Վրաստանում վերականգնվող էներգիայի աղբյուրների կառուցում, սակայն, այն ամբողջովին կենտրոնացած էր հիդրոէներգետիկայի վրա:

հայտարարվել էր որպես առաջնահերթություն, կառավարությունը աջակցում է բազմաթիվ գազային էլեկտրակայանների²⁸ և քարածխային էլեկտրակայանների²⁹ կառուցմանը:

Նախագծերի հովանավորների հետ հուշագրերը մշակվել էին էներգետիկայի զարգացման համապարփակ ռազմավարության, շրջակա միջավայրի ռազմավարական գնահատման, տվյալ նախագծերի ծախքի-եկամուտի պատշաճ վերլուծության և գետերի ջրավազանների կառավարման պլանների բացակայության պայմաններում: Վրաստանի կառավարության այս տիպիկ պահվածքին լայնորեն աջակցել են միջազգային ֆինանսական հաստատությունները, ինչպիսիք են՝ ՎՉԵԲ-ը և ՄՖԿ-ն:

Յուշագրերը իրականում ծրագրին երաշխավորում են մի շարք առավելություններ, ներառյալ՝ նախագծին հողատարածքների հանձնումը առանց փոխհատուցման (սիմվոլիկ գնով) և սպառնող բնապահպանական և սոցիալական ռիսկերի կամ ՅԷԿ-երի նախագծերի հետ կապված հնարավոր կորուստների դեպքում պահանջվող անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների սակավությունը: «Վերականգնվող էներգիա 2008» ծրագիրը պարտավորեցնում է պոտենցիալ շահագործողներին վաճառել ԷԿ-ի արտադրությունը ներքին շուկայում երեք ձմեռային ամիսների ընթացքում ԷԿ-ի շահագործման առաջին 10 տարիների ընթացքում:

2014թ. Թուրքիայում և Եվրոպայում էլեկտրա-էներգիայի գների կտրուկ նվազումը հիմնականում չի ազդում Վրաստանի կառավարության՝ էներգետիկ ոլորտի զարգացման պլանների վրա: Կառավարությունը պարզապես վերաուղղորդեց ծրագիրը դեպի էլեկտրաէներգիայի արտադրության աճ՝ ապահովելու երկրի էներգետիկ անվտանգությունը առանց տվյալ ոլորտի պլանավորման խնդիրների գնահատման և ցանկացած ձևով ուշացնելով էներգախնայողության սխեմաները և ծրագրերը:

Ներդրողներին գրավելու նպատակով 2014-2016թթ ստորագրված հուշագրերը սկսեցին ներառել երաշխավորված գնումների համաձայնագրերի դրույթներ, որոնք, որոշ դեպքերում, երաշխավորում են կայանների ամբողջ արտադրության գնումը կանխորոշված գներով: Այդ արվել է չնայած այն փաստի, որ Վրաստանը ստորագրել է ԵՄ-ի հետ ասոցացման համաձայնագիրը և նրանից պահանջեցին միանալ Եվրոպայի էներգետիկ դաշնագրին և դրա կանոնակարգմանը:

Գարդաբանի քարածխով աշխատող կայանի դեպքում (տարեկան 1 միլիարդ կՎժ արտադրություն), կառավարությունը երաշխավորում

է գնել էլեկտրականություն հաջորդ 15 տարվա ընթացքում կանխորոշված գնով (7.9-9.8 ԱՄՆ ցենտ 1 կՎժ-ի համար) այն պայմանով, եթե այն աշխատում է տեղական քարածխով: Եվրոպայի էներգետիկ համայնքի տեսակետից այս փաստը պետական աջակցության մասին 107.2 և 107.3 հոդվածների հստակ խախտում է, որը սահմանում է, որ երկիրը չի կարող պետական օգնություն ունենալ, եթե այն հաշվարկված և հաստատված չէ համապատասխան մարմնի կողմից:

Սա կարող է միանշանակ վտանգել ԵՄ-Վրաստան ասոցացման համաձայնագրով և Եվրոպայի էներգետիկ համայնքի դաշնագրով Վրաստանի կողմից ստանձնած պարտավորությունների իրականացմանը: Այնուամենայնիվ, ելնելով համաձայնագրի դրույթներից, որը համակարգի օպերատորին ստիպում է գնել էլեկտրականություն կանխորոշված գնով մինչև 2035թ., կայուն էներգետիկայի զարգացման հեռանկարը առավել կասկածելի է թվում:

Նենսկրա ՅԷԿ-ի նախագիծը այն փաստի մեկ այլ վառ օրինակ է, որ համակարգի օպերատորին պարտավորեցնելը գնել տարեկան գրեթե 2 գՎժ էլեկտրաէներգիա (ամբողջ արտադրությունը) մեկ ՄՎժ-ի համար 85.32 ԱՄՆ դոլար գնով հաջորդ 36 տարվա ընթացքում գրեթե ամբողջապես վտանգի է ենթարկում կայուն էլեկտրաէներգիայի զարգացման հեռանկարը:

Նենսկրա ՅԷԿ-ը, որը կառուցվելու է Նենսկրա Յիդրո ՓԲԸ-ի կողմից, համատեղ նախաձեռնություն է պետական Գործընկերության հիմնադրամի և Յարավային Կորեայի «K-Water» պետական ընկերության միջև: Միջազգային ֆինանսական հաստատությունները քննարկում են ծրագրի ընդհանուր ծախսերի երեք քառորդի ֆինանսավորման հարցը, որը կազմում է ավելի քան մեկ միլիարդ ԱՄՆ դոլար³⁰:

Բազմաթիվ մտահոգություններում թվում, որոնք շրջապատել են Նենսկրա ՅԷԿ-ի նախագիծը, պայմանագրի թափանցիկության պակասն է Վրաստանի կառավարության և նախագիծն իրականացնող ընկերության միջև: Տեղեկատվության հասանելիության համար տարվող գրեթե 4 տարվա հանրային պայքարներից հետո Վրաստանի կառավարությունը միայն մասնակիորեն հրապարակայնացրեց պայմանագրերը՝ չբացահայտելու գործարքի ամենահավասարակ կետերը:

Միևնույն ժամանակ, «Տնտեսական և ֆինանսական քաղաքականությունների հուշագիր»-ը, որը 2017թ. մայիսին ստորագրել է Վրաստանի կառավարությունը և ՄՖԿ-ն, հստակ սահմանում

28 Ներառյալ պետական գործընկերության հիմնադրամը

29 Գարդաբանի քարածխի օգտագործման կայան http://greenalt.org/wp-content/uploads/2016/11/Gardabani_Coal_fired_20161.pdf

30 Այս բանկերն Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ), Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկը (ՎՉԵԲ), Ասիական զարգացման բանկը (ԱՉԲ) և Ասիական ենթակառուցվածքի ներդրումային բանկը (ԱՆԵԲ)

Է, որ Եներգետիկ ոլորտում Եներգետիկայի գնման համաձայնագրերը (ԷԳՅ) պարունակում են ֆինանսական ռիսկերի աճ կապված պետական ձեռնարկությունների և մասնավորի և պետականի գործընկերություններին՝ մասնավորապես Եներգետիկ ոլորտում: Սա մասնավորապես գնման երաշխիքային ժամկետի, ինչպես նաև գնման երաշխավորված գնի պատճառով է, որը չի կարող լինել ավելին քան 6 ԱՄՆ ցենտ 1 կՎԺ-ի համար, մինչդեռ այս նախագծերի գումարային դրվածքային հզորությունը, բանակցությունների համաձայն, չպետք է գերազանցի 500 ՄԿ³¹:

ՄՖԿ-ն բացառություններ արեց երկու նախագծի համար՝ Նամխավանի ՅԷԿ կասկադի նախագիծը և Կորոմխետի հիդրոնախագիծը³²: Այնուամենայնիվ, ՄՖԿ-ն նաև ընդգծեց, որ այս երկու նախագծերը չպետք է առաջ գնան, մինչև չիրականացվի համապարփակ «ֆինանսական ռիսկերի ամբողջական վերլուծություն» բոլոր ֆինանսական ռիսկերի համար՝ խորհրդակցելով ՅԷ-ի և ՄԲԿ-ի Եներգետիկ ոլորտի փորձագետի հետ, մինչդեռ ռիսկերի գնահատումը պետք է «նկարագրի և չափորոշի այլ ռիսկային պայմանագրային պարտավորություններ» (ներառյալ՝ օրինակ, պայմանագրի դադարեցման ռիսկը կամ շինարարական ռիսկերը):

ՄՖԿ-ի մտահոգությունները իրենց արձագանքը գտան Յամաշխարհային բանկում, պնդելով, որ «...եթե Վրաստանի ներկայիս Եներգետիկ շուկայի մոդելն արդիական չէ, Եներգետիկ համակարգի շահագործումը կհանգեցնի ավելի բարձր ծախսերի և ավելի մեծ ազդեցություն կթողնի բնակչության 40%-ի վրա: Օրինակ, 2014 թվականից ի վեր կառավարություն կնքել է Եներգետիկայի գնման համաձայնագրեր՝ հիդրոէներգետիկան խթանելու և Եներգետիկ ինքնաբավության հասնելու նպատակով պետականի և մասնավորի գործընկերությունների միջոցով: Սակայն հարակից չնախատեսված պարտավորությունները և ռիսկերը պատշաճ ձևով հաշվի չեն առնվել, որը մեծացրել է ֆինանսական ռիսկերին ենթարկվելու հավանականությունը»³³:

Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատում

ՅԷԿ-երի նախագծերը Վրաստանում, որոնք մշակվել են միջազգային ֆինանսական հաստատությունների աջակցությամբ, հանդիսանում են այն նախագծերի վառ օրինակներ, որտեղ

31 <https://www.imf.org/en/Publications/CR/Issues/2017/04/13/Georgia-Request-for-Extended-Arrangement-Under-the-Extended-Fund-Facility-and-Cancellation-44834>

32 Գումարային հզորություն՝ 600 ՄԿ

33 <http://documents.vsemirnyjbank.org/curated/ru/229391493845045659/pdf/P161767-Georgia-PLR-Approved-for-SECPO-04072017.pdf> հաշվետվություն 108467-GE, էջ՝ 13

շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատումներն իրականացվել են բազմաթիվ խախտումներով և որտեղ բացակայում է պատշաճ հանրային խորհրդակցության գործընթացը: Վրաստանի ներկայիս բնապահպանական թույլ-տվությունների տրամադրման մասին օրենքը չի տրամադրում համարժեք երաշխիքներ ո՛չ շրջակա միջավայրի, ո՛չ տեղական համայնքների համար: Շրջակա միջավայրի ազդեցության գնահատումը և դրա վերջնական փաստաթուղթը պարզապես ձևականություն են: Բնապահպանության նախարարության բարձրաստիճան պաշտոնյաների համաձայն, եթե ընկերությունը «ընդունում» է բարձր ռիսկերը և դրանք ընդունելի են ընկերության համար, կառավարությունը չպետք է միջամտի և պետք է պարզապես տրամադրի «բնապահպանական փորձաքննության դրական եզրակացություն»³⁴: Այս մոտեցումը հանգեցնում է տարբեր իրավիճակների, երբ ՅԷԿ-երին տանում է սողանքը³⁵ կամ ՅԷԿ-երը լրջորեն վնասվում են վարարումների ժամանակ³⁶, որը հաճախ ուղեկցվում է մարդկանց մահով և համայնքի կենսամիջավայրին հասցրված չվերականգնվող վնասով:

Ինչպես ստորև նշված դեպքերն են պայացուցում, միևնույն խնդիրները առկա են միջազգային ֆինանսական հաստատությունների միջոցով կառուցված ՅԷԿ-երի դեպքում: Միջազգային ֆինանսական հաստատությունների այն պնդումները, որ իրենց ներգրավումը կարող է լրացուցիչ արժեք բերել առկա լավագույն պրակտիկաների և միջազգային չափանիշների կիրառման առումով, հարցականի տակ են: Ամենախնդրահարույց փաստերից մեկն այն է, որ ազդակիր համայնքների համար ոչինչ չի փոխվում, որոնք հաճախ հույս են դնում այս հաստատությունների ազդեցության և հեղինակության վրա, ո՛չ իմաստալից հանրային մասնակցության, ո՛չ հետևանքների առումով:

Փարավանի ՅԷԿ

Փարավանի ՅԷԿ նախագծի ընդհանուր արժեքը կազմում է 156.5 միլիոն ԱՄՆ դոլար, որին աջակցել է

34 Կանխատեսվող ողբերգություն՝ չունումնափրկված բնապահպանական ռիսկեր, <http://liberali.ge/articles/view/3628/prognozirebadi-tragedia--garemos-sheufasebeli-riskebi>

35 Բակվի ՅԷԿ-ին տարել է սողանքը 2013թ, <http://www.interpressnews.ge/ge/politika/230399-mthavroba-qbakhvi-hesisq-ehsploataciashi-shesvlis-tharighis-gadavadebase-imsjelebs.html?ar=A>

36 Կինթրիշի ՅԷԿ-ը գտնվում է շինարարության փուլում: ՅԷԿ-ի թունելը փակվել է 2017թ. դեկտեմբերին փլուզման պատճառով, իսկ 2017թ. հոկտեմբերին ուժեղ անձրևների պատճառով ՅԷԿ-ի տարածքը ամբողջությամբ լցվել է նստվածքներով, իսկ ամբարտակը լրջորեն վնասվել է <http://ajaratv.ge/news/ge/21592/kintrishi-hesi---dzlieri-tsvimis.html>

ՎՉԵԲ-ը 52 միլիոն ԱՄՆ դոլարի ֆինանսավորմամբ և 5 միլիոն ԱՄՆ դոլար կանոնադրական կապիտալի մասնաբաժնի տեսքով տրամադրել է «Georgia Urban Energy»-ին՝ թուրքական «Անադոլու Գրուլփ» կոնգլոմերատ ընկերության վրացական դուստր ձեռնարկությունը: ՄՖԿ-ն տրամադրել է 40.5 միլիոն ԱՄՆ դոլար և ևս 23 միլիոն ԱՄՆ դոլար հավաքվել է առևտրային բանկերից:

Փարավանի ՅԷԿ-ը դերիվացիոն տիպի նախագիծ է, որը ներառում է 14 կիլոմետրանոց դերիվացիոն թունելի կառուցում՝ փոխելով տարեկան միջին հոսքի 90%-ի ընթացքը Փարավանից դեպի Խերթվիսի գյուղի Մտքվարի գետի վերին հոսանք: Ելնելով այն փաստից, որ Մտքվարի գետը արդեն իսկ սպառնում է գյուղին կանոնավոր վարարումների պատճառով, Փարավանի 90%-ը միայն մեծացնում է վարարման ռիսկերը: Ավելին, տարեկան միջին հոսքից միայն 90% թողնելը որպես «սանիտարական հոսք» գետի Էկոհամակարգի պահպանման համար արդեն իսկ վերացրել է գետի ձկան տեսակները:

ՅԷԿ-ի նախագիծը նպատակ ունի Էլեկտրա-Էներգիա մատակարարել Վրաստանի շուկա երեք ձմեռային ամիսների ընթացքում (դեկտեմբեր-փետրվար) և Էներգիա արտահանել թուրքական շուկա տարվա մնացած 9-ը ամիսների ընթացքում: Շինարարությունը մեկնարկեց 2010թ.-ին և պետք է ենթադրաբարավարտվեր 2014թ.-ին: Սակայն 2012թ. նոյեմբերին ՅԷԿ-ի շինարարությունը կանգնեցվեց, քանի որ թուրքական «ILGI» շինարարական ընկերությունը, որի հետ պայմանագիր էր կնքել «Georgia Urban Energy»-ն, դուրս եկավ նախագծից: Յեռանալու բացատրությունը ընկերության կրած ֆինանսական և նյութական վնասներն էին: Փորվելից որոշ նյութեր շատ ավելի ամուր էին, քան սահմանված էր Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման մեջ և նրանց մեքենաների մի մասը փչացավ, մինչդեռ նախագծի հովանավորը չփոխհատուցեց ենթակապալառուի լրացուցիչ ծախսերը:

2011թ. «Green Alternative»-ը բողոք ներկայացրեց ՎՉԵԲ-ի Բողոքների դիտարկման գրասենյակ (PCM)՝ խնդրելով նախաձեռնել համապատասխանելիության ստուգում, որպեսզի ճշտվի, թե արդյոք նախագծի շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատումը ճիշտ է նույնականացրել ռիսկերը և հարակից մեղմացման միջոցառումները, մասնավորապես՝ (1) գետի խոսքի ռեժիմի անհամապատասխան ընտրությունը, որը կարող է կտրուկ ազդեցություն թողնել գետի Էկոհամակարգի և ձկան ցեղատեսակների վրա (ներառյալ՝ կարմիր գրքում գրանցված իշխան) և (2) Խերթվիսի գյուղի հնարավոր հեղեղումը:

Համապատասխանելիության ստուգման վերջնական հաշվետվությունը հրապարակվել է 2014թ. սկզբին, որը հաստատեց, որ բանկը

պատշաճ կերպով չի գնահատել նախագծի հիմնական բնապահպանական ռիսկերը՝ այսպիսով խախտելով իր բնապահպանական և սոցիալական քաղաքականությունը կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունների առումով: Բողոքների դիտարկման գրասենյակը որոշեց, որ ջրի հոսքի տոկոսը որոշվել է առանց վավերացման և առանց գետի Էկոլոգիայի, ձևաբանության և հոսքի արագության համապատասխան գնահատման, որպեսզի հնարավոր լինեի խուսափել գետի Էկոհամակարգին հասցրված անվերականգնելի վնասից:

Ուշադրության արժանի է այն փաստը, որ հաշվետվությունը չհամարեց, որ ՎՉԵԲ-ը խախտել է իր սեփական քաղաքականությունը Խերթվիսի գյուղի պոտենցիալ հեղեղման ռիսկերի առումով, քանի որ, հաշվետվության համաձայն, ավելի ուշ փուլում այս հիմնահարցը ներառվել էր ՎՉԵԲ-ի և նախագծի ներդրողի միջև կնքված «լրացուցիչ համաձայնագրով» և այսպիսով ենթակա էր հանրային խորհրդակցության: Ինչպես պարզվում է, ընկերությունը երբևէ չիրապարակեց Խերթվիսի գյուղի հեղեղման ռիսկերի մասին ուսումնասիրությունը՝ միևնույն ժամանակ հավաստիացնելով հասարակությանը, որ նախագիծը չի հեղեղի գյուղը:

Դարիալի ՅԷԿ

108 ՄՎ հզորությամբ Դարիալի նախագծի կառուցմանը աջակցել է ՎՉԵԲ-ը 2014թ. մայիսին: Ծրագրի ընդհանուր արժեքն էր 123 միլիոն ԱՄՆ դոլար, որից ՎՉԵԲ-ը հատկացրել է 80 միլիոն ԱՄՆ դոլար:³⁷ ՅԷԿ-ի շինարարությունը մեկնարկել է 2011թ. առանց համապատասխան բնապահպանական թույլտվության Կազբեգի ազգային պարկի տարածքում: 2011թ. նոյեմբերին նախագծի հովանավոր «Dariali Energy» ՓԲԸ-ն դիմում ներկայացրեց և ստացավ թույլտվություն Դարիալի նախագծի համար, որը ներառում էր Կազբեգի ազգային պարկի տարածքը: 2012թ. փետրվարին Բնապահպանության նախարարության՝ պահպանվող տարածքում Դարիալի ՅԷԿ-ի շինարարությունը թույլատրելու սխալը «շտկելու» նպատակով Վրաստանի խորհրդարանը փոփոխեց Կազբեգի ազգային պարկի մասին օրենքը՝ հանելով տվյալ տարածքը բնության պահպանվող տարածքների համակարգից:

ԸՅԿ-ներին Դարիալի ՅԷԿ-ի մոտակայքում գտնվող համայնքների հիմնական մտահոգություններից մի քանիսն առաջվում էին նախագծի վայրի ոչ ճիշտ ընտրությանը և վտանգավոր երկրադինամիկ տարածքում նախագծի մշակման ընթացքում ներառված ռիսկերի ոչ համարժեք գնահատմանը:

37 <http://www.ebrd.com/work-with-us/projects/psd/dariali-hpp.html>

2014թ. մայիսին և օգոստոսին Դեվդորակի սառ-
ցադաշտի երկու հաջորդական սողանքները
դարձան առնվազն 6 աշխատողի և բեռնատարի 4
վարորդի մահվան պատճառ շինհրապարակում:

2014թ. Վրաստանի բնապահպանական խմբերը
բողոք ներկայացրեցին Դարիալի ՅԷԿ-ի դեմ ՎՉԵԲ-ի
Բողոքների դիտարկման գրասենյակ (PCM):

2017թ. Բողոքների դիտարկման գրասենյակը
պարզեց, որ ՎՉԵԲ-ը բավարար չափով չի
գնահատել բնական աղետների պոտենցիալ
ռիսկը, ներառյալ՝ հեղեղատների, սողանքների,
քարաթափումների և ցեխի հոսանքների ձև-
վորումը: Գրասենյակը եզրակացրեց, որ բանկը
խախտել է բնապահպանության և սոցիալական
քաղաքականության իր սեփական չափանիշները,
երբ նրանք որոշում կայացրեցին ֆինանսավորել
Դարիալի նախագիծը: Սա մեծ հարված էր
Վրաստանի էներգետիկայի նախարարությանը, որը
պարբերաբար պնդում էր, որ Դարիալի նախագիծը
լիովին համապատասխանում էր միջազգային
չափանիշներին:

Շուախեվի ՅԷԿ

Շուախեվի ՅԷԿ-ը երրորդ նախագիծն է, որը
հաստատվել է միջազգային ֆինանսական հաստա-
տությունների կողմից չնայած տեղի բնակիչների
և քաղաքացիական հասարակության խիստ
ընդդիմությանը: Նախագիծը ներառում էր 22
մետրանոց Շխալթա (19.4 հեկտար ջրամբարով)
և 39 մետրանոց Դիդաչարա (16.9 հեկտար ջրամ-
բարով) ջրամբարտակների կառուցումը Շխալթա
և Աղջարիսցկալի գետերի վրա, ինչպես նաև
երեք դիվերսիոն թունելների կառուցումը (5.8,
9.1 and 17.8 կիլոմետր երկարությամբ)՝ փոխելով
ջրի հոսքի ընթացքը Շխալթա, Չիրուխիսցկալի
և Աղջարիսցկալի գետերի վերին հոսանքից
դեպի ջրամբարտակներ, իսկ այնուհետև՝ դեպի
Էլեկտրակայան: Ամբողջ նախագծի արժեքը մինչև
420 միլիոն ԱՄՆ դոլար էր:

2015թ. ՎՉԵԲ-ի հայտարարության համաձայն,
«ՄՖԿ-ը, ԱՉԲ-ը, ՎՉԵԲ-ը, Tata Power»-ը և «Clean
Energy Invest»-ը Վրաստանին օգնեցին հասնել
էներգետիկ ինքնաբավության»³⁸: Նախագծին մեծա-
մասամբ աջակցել էին միջազգային ֆինանսական
հաստատությունները, «ՄՖԿ-ի կողմից 250
միլիոն ԱՄՆ դոլար պարտքի ֆինանսավորումը
հանդիսանում է երբևէ ամենամեծ ներդրումը
Վրաստանի մասնավոր հիդրոէներգետիկայի ոլոր-
տում, որը կազմված է երկու երկարաժամկետ
ավագ վարկերից՝ յուրաքանչյուրը 90 ԱՄՆ դոլար
ԱՉԲ-ից և ՎՉԵԲ-ից և 70 միլիոն ԱՄՆ դոլար ՄՖԿ-
ից: ՄՖԿ-ի ընդհանուր ներդրումը այս նախագծում

104 միլիոն ԱՄՆ դոլար է, որը ներառում է 34
միլիոն ԱՄՆ դոլարի ներդրում՝ «Adjaristsqali Geor-
gia» ընկերության կանոնադրական կապիտալի
մասնաբաժնի տեսքով, որը Յնկաստանի «Tata
Power»-ի և Նորվեգիայի «Clean Energy Invest»-ի
համատեղ նախաձեռնությունը է (յուրաքանչյուրը՝
40 %) և ՄՖԿ (20 %):»:

Տեղի համայնքների և ԶՅԿ-ների կողմից
բարձրացված հիմնական մտահոգությունները
վերաբերվում էին այն փաստին, որ շինարարական
աշխատանքները մեկնարկել էին առանց պա-
հանջվող և տեղում անցկացվող մանրազնի
երկրաբանական ուսումնասիրության: Չնայած
ծրագրով չի պահանջվում որևէ տեսակի
վերաբնակեցում, տեղի բնակիչներն վախենում
են, որ ծրագիրը կազդի գյուղերի վրա ծրագրի
կանխորոշված տարածքից դուրս՝ հաշվի առնելով
այն փաստը, որ այս տարածքը սողանքների
հակում ունի: Դերիվացիոն թունելների
կառուցումը պայթեցման մեթոդների կիրառմամբ
և ջրամբարները տեղադրումը Դուրթա գյուղից
ներքևի հատվածում կամ Դիդաչարա, Ցաբլանա
կամ Չանչխալո գյուղերի մոտ հեռավորության վրա
կարող էին ակտիվացնել սողանքները, որոնք կարող
էին կտրուկ ազդեցություններ ունենալ այս գյուղերի
համար: Ընկերությունը հրաժարվեց երաշխիքային
պայմանագրեր կնքել գյուղացիների հետ՝ փոխ-
հատուցում տրամադրելով այն դեպքերում, երբ
շինարարությունը վնաս կպատճառի: Զանի դեռ
հանրային բողոքները շարունակվում են, երեք տարի
առաջ տեղի բնակիչների բողոքները Շուախեվի
նախագծի դեմ ճնշվեց ոստիկանության կողմից
էներգետիկայի փոխնախարարի մասնակցությամբ:
Շինարարության ընթացքում տեղի բնակիչները
բողոքում էին մի շարք գյուղերում աղբյուրի ջրի
կորստի, հողի փլվածքների, վնասված տների
և կենսապայմանների զգալի վատթարացման
պատճառով: Տուժածների մեծամասնության դեպ-
քում կառավարությունը ստիպված էր մշակել
վերաբնակեցման ծրագիր՝ տրամադրելով միայն
10,000 ԱՄՆ դոլար վերաբնակեցման համար:

ՅԷԿ-ը պաշտոնապես բացվեց 2017թ. հունիսին:
Միևնույն ժամանակ, 2017թ. հուլիսին Գորխանա-
ուլիի գյուղի բնակիչները, որոնք ՅԷԿ-ի կառուցումից
հետո նախկինում բողոքում էին չորացած
աղբյուրներից, սկսեցին մտահոգվել գյուղերում
ստորգետնյա ջրի՝ գնալով աճող մակարոնակների
վերաբերյալ: Շուտով պարզ դարձավ, որ ՅԷԿ-ը
տեխնիկական խնդիրներ ուներ և չէր կարող գործել:

2017թ. սեպտեմբերին ընկերության պաշտո-
նական հայտարարությունը ասում էր, որ «Պարզվեց,
որ Շխալթա և Դիդաչարա միջև թունելում առկա է
խցանում, որը մոտավոր հաշվարկներով գտնվում
է Դիդաչարայի ջրամբարի տարածքից մոտ 170
մետր հեռավորության վրա: Այնուամենայնիվ, այս

38 <http://www.ebrd.com/cs/Satellite?c=Content&cid=1395243488679&d=Mobile&pagename=EBRD%2FContent%2FContentLayout>

իցանումը չի ազդի ՀԷԿ-ի շահագործման վրա, որը պատրաստ է առևտրային գործառնությունների համար:»

2017թ. նոյեմբերին ընկերության գործադիր տնօրենը ընդունեց, որ թունելի փլուզումը կարող էր լինել տարածքում անհայտ, անկանխատեսելի երկրաբանական զարգացման պատճառով: Նա նաև պնդում է, որ շինարարական աշխատանքների հետ համատեղ անցկացվում էր մանրամասն երկրաբանական ուսումնասիրություններ: Ընդունված պրակտիկայով պահանջվում է անցկացնել ամբողջական և մանրամասն երկրաբանական ուսումնասիրություն նախքան ընկերության կողմից շինարարարական աշխատանքների իրականացման թույլտվություն ստանալը: Ընկերությունը նաև հայտարարեց, որ այն չի կարող վնաս պատճառել տեղի բնակիչներին: Ճանապարհների պետական վարչությունը ստիպված է ծախսել 800 հազար վրացական լարի (մոտ 350 000 ԱՄՆ դոլար) Խուլո-Բաթումի ճանապարհը վերականգնելու համար, քանի որ գետը տարել էր հողը և տեղի էր ունեցել փլուզում:³⁹

Հանրային մասնակցություն

Անհրաժեշտ է նշել, որ 2005 թվականից ի վեր թույլտվության տրամադրման որոշումներում հանրային մասնակցության ապահովման առումով ազգային օրենսդրությունը լիովին հակասում է միջազգային պարտավորություններին՝ ներառյալ 2001թ. միացած Օրիուսի կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները:

Կոնվենցիայով պահանջվում է, որ հանրությունը ժամանակին և արդյունավետ կերպով ներգրավվի որոշումների կայացման գործընթացում, մինչդեռ Լիցենզիաների և թույլտվությունների մասին օրենքի համաձայն, որոշումները կայացվում են պարզ վարչական ընթացակարգերի միջոցով և այս նորմն ինքնին չի նախատեսում հանրության մասնակցությունն այս գործընթացում: 2018թ. ի վեր կկիրառվի շրջակա միջավայրի ազդեցության գնահատման մասին նոր օրենքը, որը համապատասխանում է ԵՄ դիրեկտիվաներին: Սակայն, այս փոփոխությունն արվել է միայն ԵՄ-Վրաստան ասոցացման համաձայնագրի համաձայն, որը պահանջում է օրենսդրության մոտավորեցում մինչև 2017թ. սեպտեմբերի 1-ը:

ՇՄԱԳ-ի և ՇՄԱԳ-ի մասին օրենքի նախագիծը՝ «Շրջակա միջավայրի գնահատման օրենսգիրքը», գործնականում պատրաստ էր մինչև 2015 թվականի ավարտը, քանի որ օրենքը մշակվել էր Կանաչ տնտեսություն ծրագրի շրջանակներում ԵՄ-ի և ՏՀԶԿ-ի աջակցությամբ: Սակայն, առանց որևէ բացատրությունների, օրենքը ընդունումը

հետաձգվեց ամբողջ 2016թ.-ի ընթացքում և գրեթե անփոփոխ տարբերակով Վրաստանի խորհրդարանին ներկայացվեց 2017թ. գարնանը: Օրենքը ուժի մեջ կմտնի 2018թ. հունվարի 1-ին: Այնուամենայնիվ, օրենքը չի երաշխավորում, որ պետության կողմից հանրային մասնակցությունն իսկապես կխրախուսվի: Օրինակ՝ 2017թ. գարնանը KFW-ի կողմից ֆինանսավորված Քսանի Ստեփանծմինդա էլեկտրահաղորդման գծի դեպքում մի շարք մասսայական բողոքի ցույցեր տեղի ունեցան: Ազդակիր համայնքները անհանգստացած էին շինարարական աշխատանքների պատճառով առաջացած փլվածքներով իրենց տներից ոչ մեծ հեռավորության վրա: Մի քանի անգամ բողոքի ցույցեր կազմակերպվել էին Դուշեթիում և Կազբեգիում՝ երկու շրջաններում, որտեղով անցնում էր էլեկտրահաղորդման գիծը: Տեղի համայնքների մեծագույն անհանգստությունը էլեկտրամագնիսական դաշտերի ազդեցությունն էր մարդկային առողջության վրա: Բոլոր դեպքերում իշխանությունները արձագանքեցին բողոքի ցույցերին՝ մոբիլիզացնելով արագ արձագանքման ոստիկանությունը: Մայիսին իրավիճակն ավելի սրվեց, երբ տեղի բնակիչներն համախմբեցին բողոքելով էլեկտրահաղորդման գծի շինարարության դեմ՝ ստիպելով ընկերությանը դադարեցնել շինարարությունը: Տեղի բնակիչների և ոստիկանության միջև բախումները օգտագործվեցին Էներգետիկայի նախարարի պարոն Կալաձեի և փոխվարչապետ պարոն Էլոշվիլիի կողմից մեղադրելու ԶԻԿ-ներին և տեղական համայնքներին «կործանիչ ուժ» լինելու մեջ և մեղադրեցին նրանց պետական դավաճաններ և Ռուսաստանի օգտին գործելու մեջ:⁴⁰

Քաղված դասեր

Շրջակա միջավայրի գնահատումը և հանրային մասնակցությունը կարևոր են, եթե կառավարությունը չի ակնկալում ստանալ միայն դրական հետադարձ արձագանք և իրենց որոշումների անվերապահ աջակցություն, միևնույն ժամանակ վարկաբեկելով ցանկացած լուրջ ընդդիմադիրներին և հաշվի չառնելով նրանց, ովքեր արտահայտում են իրենց մտահոգությունները և վախերը՝ պնդելով, որ նրանք չեն ներկայացնում համայնքներին:

Եզրակացություններ

o Լայնամասշտաբ և իմաստալից հանրային մասնակցությունը կարող է աջակցել ներդրումային

39 <http://batumelebi.netgazeti.ge/news/108711/>

40 «Վտանգավոր աշխատանք՝ ճնշման աճը բնապահպանական ՅԿ-երի և ակտիվիստների վրա Նախկին ԽՍՀՄ երկրներում և ԱՄՆ-ում»

Նախագծերը, ինչպես նաև օգնել խուսափել գրեթե
չվերականգնվող վնասի վերականգման արտաքին
ծախսերից:

.....

.....

.....

.....

.....

.....

Հունգարիա

ՀԿ-ների կապերի հաստատում և պատվիրակման թափանցիկ համակարգեր՝ ԵՄ հիմնադրամներով արդյունավետ մասնակցության լավ հիմք

ՀԿ-ների կապերի հաստատում և պատվիրակման թափանցիկ համակարգեր՝ ԵՄ հիմնադրամներով արդյունավետ մասնակցության լավ հիմք

Հունգարական բնապահպանական ՀԿ համագործակցությունը ունի երկար պատմություն, որը սկսվել է 1990թ.: Ուսումնասիրության այս կոնկրետ օրինակում մենք կնկարագրենք, թե համագործակցության ինչ տարրեր կան և որոնք են կապերի հաստատման ամենակարևոր ազդեցությունները:

Կապերի հաստատման ազգային կառույցներ

Բնապահպանության և բնության պահպանման ոլորտում ՀԿ-ների օրինական ընտրական համակարգը հիմնված են Ազգային հավաքի վրա, որը 1990 թվականից կազմակերպվում է յուրաքանչյուր տարի տարբեր կազմակերպության կողմից: Ազգային հավաքի ժամանակ գրանցված բոլոր բնապահպանական կազմակերպությունները ունեն քվեարկելու իրավունք: Թեկնածուների առաջադրումը բաց գործընթաց է, մինչդեռ ընտրությունները անցկացվում են գաղտնի քվեարկությամբ: Ներկայումս կազմակերպությունների այս հարթակն ընտրում է պատվիրակ մոտ 40 մարմնի համար՝ ներառյալ ԵՄ հիմնադրամների բոլոր մշտադիտարկման հանձնաժողովներ: Այս պատվիրակությունները ճանաչվում են կառավարության կողմից:

Ազգային հավաքը սկզբում ծառայում էր որպես մասնագիտական փոխանակման հարթակ, այնուամենայնիվ, 1996 թ-ից ի վեր այն նաև ստանձնեց ընտրական մարմնի գործառույթը, որտեղ բնապահպանական ՀԿ-ները առաջին անգամ հնարավորություն ստացան

պատվիրակել ներկայացուցիչներ տարբեր մարմիններ՝ խորհրդատվական, դրամաշնորհներ տրամադրող, մասնագիտական որոշումներ կայացնող: Անհրաժեշտություն առաջացավ ստեղծել Գործառնությունների ներքին կանոններ, որոնք ներառում են ընտրության գործընթացի կանոնակարգումը: Պատվիրակներն ընտրվում են երկու տարի ժամկետով, սակայն սա խնդիր չէ մշտադիտարկման հանձնաժողովների համար, որտեղ նախընտրելի է պատվիրակների ցածր հոսունություն, քանի որ ՀԿ համայնքը սովորաբար վստահության քվե է տալիս պատվիրակին ԵՄ բյուջետային ամբողջ ժամանակաշրջանի համար: Պատվիրակներն նաև պարտավոր են պարբերաբար տեղեկացնել բնապահպանական ՀԿ համայնքին իրենց աշխատանքի մասին նամակագրական կապի ընդհանուր ցուցակի միջոցով:

Ժամանակին համընթաց, քանի որ պատվիրակների թիվը աճում էր, իսկ տեղեկատվության հոսքը՝ արագանում, բնապահպանական ՀԿ-ները հասկացան, որ անհրաժեշտ է սահմանել առավել ֆորմալ համագործակցության համակարգ, որը տեղի ունեցավ 5 տարի առաջ: Համագործակցային այս համակարգն անվանվեց Կանաչ ՀԿ-ների համագործակցություն և Համակարգման խորհրդի 20 անդամներն ընտրվում են ամեն տարի կազմակերպելու ՀԿ կապերի հաստատումը երկու ազգային հավաքների միջև: Համակարգման խորհուրդը հավաքվում է երկու ամիսը մեկ՝ քննարկելու կապերի հաստատման հիմնախնդիրները՝ տրամադրելով հարթակ վերջին բնապահպանական արշավների մասին տեղեկատվության փոխանակման համար և որոշումներ կայացնելով մի քանի կառավարական խորհուրդներ պատվիրակներ ներկայացնելու մասին:

Հասարակության դերակատարները/շահառուները՝ ներառյալ կառավարությունը, դիտարկում են այն որպես բնապահպանական ՀԿ-ների ներկայացուցչական, խորհրդակցական գործընկերային հարթակ: Քանի որ Համակարգման խորհուրդը կազմակերպում է ՀԿ պատվիրակումը տարվա ընթացքում, եռօրյա Ազգային հավաքը կարողացավ դառնալ առավել ոչ ֆորմալ հավաք և յուրաքանչյուր տարի հավաքում է 400-600 բնապահպանական ՀԿ-ների ակտիվիստներ և բնապահպանական առումով գիտակից քաղաքացիներ: Պարտադիր չէ, որ այս մեթոդաբանությունը համապատասխանի քաղաքացիական հասարակության յուրաքանչյուր մասնաճյուղի համար, բայց այն հավանաբար արժե դիտարկել: Համակարգի քսանամյա գոյությունը ապացուցում է դրա ճկունությունը և արագ արձագանքելու ունակությունը: Համագործակցման ներքին կանոնները մշակվել են բնական ներքին

կարիքների համատեղ և նրանք դիտարկել են ժողովրդավարությունը և արդարությունը կապերի հաստատման մեջ:

Բնապահպանական ՅԿ-ների շրջանային համագործակցություն

Յունգարիայում բնապահպանական ՅԿ-ների կապերի հաստատման մեկ այլ կարևոր գործիք է Կանաչ շրջանների ցանցը, որը համակարգում է NSC-FoE Hu (Բնապահպանների ազգային հասարակություն՝ Երկրագնդի ընկերներ - Յունգարիա): Նրանք աշխատում են շրջանային և տեղական բնապահպանական ՅԿ-ների հետ ԵՄ հիմնադրամներով սկսած 2000 թվականից: Նրանք նույնիսկ ձևավորեցին ՅԿ-ների յոթ ցանց երկրի բոլոր NUTS2 շրջաններում: Ավելի քան 170 ՅԿ միացան շրջանային ցանցերին, որոնք ծառայում են ԵՄ հիմնադրամների տեղեկատվական կենտրոններ, որոնք ապահովում են լավ պրակտիկաների և փորձերի փոխանակում, ինչպես նաև համակարգում են բնապահպանական քարոզչությունը շրջանային պլանավորման և գործառնական ծրագրերի իրականացման առումով: Տարիների ընթացքում շրջանային ցանցերն ունեն մի շարք հաջողություններ շրջանային հանրային մասնակցության առումով, բայց վերջին տարիների ընթացքում նրանք կորցրել են կարևորությունը, քանի որ կառավարությունը կազմակերպել է շրջանային զարգացման պլանավորման երկրի մակարդակով (NUTS3)՝ NUTS2 շրջանների փոխարեն:

Մասնակցություն ԵՄ Հիմնադրամների մշտադիտարկման հանձնաժողովներում

Ի թիվս այլոց, բնապահպանական ՅԿ-ների լավ կազմակերպված ներկայացուցչական համակարգի շնորհիվ հավանաբար Յունգարիան այն երկիրն է, որտեղ մշտադիտարկման հանձնաժողովներն ունեն ամենաշատ բնապահպանական ՅԿ-ների անդամներ: Բոլոր ազգային և արտասահմանյան մշտադիտարկման մարմինները հրավիրեցին բնապահպանական ՅԿ գործընկերոջը ներկայացնել կայուն զարգացման հորիզոնական ասպեկտները: Բնապահպանական ՅԿ-ների անդամները ընտրվում են Կանաչ ՅԿ Համագործակցության կողմից, ինչպես նկարագրվում է վերոնշյալ հատվածում: Այս ՅԿ-ների ներկայացուցիչները սովորաբար հանձնաժողովների ամենակտիվ անդամներ են: Նրանք ներկայացնում են պլանների, ծրագրերի, հայտերի մրցույթի բնապահպանական պայմանների բարելավման ամենաշատ առաջարկները, ինչպես նաև քարոզում

են իմաստավոր հանրային մասնակցություն: Նրանք հավաքում են տվյալներ ՅԿ համայնքից մինչև հանդիպումները և տեղեկատվություն են տարածում ֆոնդերի մասին վեբ էջերի, էլ-նամակների ցանցի և Համակարգման խորհրդի հանդիպումների միջոցով: Մշտադիտարկման հանձնաժողովների բնապահպանական ՅԿ-ների պատվիրակները իրականացնում են նաև կապերի հաստատման գործունեություն, որտեղ նրանք պարբերաբար փոխանակվում են տեղեկատվությամբ և փորձով, կազմակերպում են հանդիպումներ և վերապատրաստումներ միմյանց կարողությունները զարգացնելու նպատակով: Չնայած Յունգարիայի վերջին կառավարությունն ավելի քիչ է աջակցել ԵՄ հիմնադրամներում հանրային մասնակցությունը և փորձել է իրականացնել ԵՄ տարածաշրջանային քաղաքականության պարզապես նվազագույն գործընկերային պահանջները, բնապահպանական ՅԿ-ները կարող են պահել թափանցիկ, մասնավորից դեպի ընդհանուր վրա հիմնված պատվիրակում և կապերի հաստատման համակարգ մշտադիտարկման հանձնաժողովներում: Օրինակ, ՅԿ-ները կարողացան ազդել և փոխել հանձնաժողովների ներքին կանոնները և հայտերի մրցույթը հանուն ԵՄ բյուջեի առավել բնապահպանական և սոցիալական կատարողականության:

Նախագծի կայունության գնահատումներ

2004թ.-ից մինչև 2006թ. Յունգարիայի NSC-FoE-ի Տարածաշրջանային զարգացման գործառնական ծրագրի ղեկավար մարմինը (S2QԾ) լիազորեց Յունգարիային համագործակցել S2QԾ-ի ծրագրի առաջարկների գնահատման շուրջ՝ բնապահպանական կայունության մասով՝ ընդունելով կազմակերպության՝ բնապահպանական և տարածաշրջանային քաղաքականության հարցերով փորձը:

Այս անգամ ծրագրի առաջարկները գնահատվել և միավոր են ստացել շրջանային մակարդակներով, սակայն Ղեկավար մարմինը նաև դրանք գնահատեց մի քանի չափանիշներով, ինչպես են բնապահպանական և հավասար հնարավորությունները: NSC-FoE Hu-ի փորձագիտական թիմը հնարավորություն ուներ առաջարկել, թե արդյոք ծրագրի առաջարկը պետք է ընդունվի, մերժվի կամ հետ ուղարկվի ծրագրի հեղինակների փոփոխությունների համար: Փորձագետների և տարածաշրջանային զարգացման գործակալությունների կարծիքների հիման վրա Որոշումների նախապատրաստման հանձնաժողովը վերջնական առաջարկություն է ներկայացնում ֆինանսավորում տրամադրելու կամ չտրամադրելու մասին: Մեկ տարվա ընթացքում

NSC-FoE Hu-ի փորձագետները գնահատեցին մոտ 1000 ծրագրի առաջարկ, իսկ ծրագրերի մոտ 10 %-ը առաջարկել են մերժել, իսկ 20 %-ը՝ փոփոխել, իսկ մնացածի մեծամասնությանը աջակցեց Հանձնաժողովը, սակայն պայմանագիր կնքելու համար սահմանվել էին բնապահպանական խիստ դրույթներ: Ծրագրի առաջարկներից մի քանիսը բնապահպանական տեսանկյունից համարժեք չէին, և հետևաբար մերժվել էին: Շատ դեպքերում դա պատահում էր Բնապահպանության նախարարի վճռական դիրքորոշման պատճառով, որը ՀԿ-ների և կառավարության բաժինների հաջողված համագործակցության վառ օրինակ է: Ծրագրերի առաջարկների վերագնահատման և որակի ապահովման համակարգն այն էր, որ քանի որ Ղեկավար մարմինը պարբերաբար հետ էր ուղարկում ցածր կատարողականություն ունեցող ծրագրերի առաջարկները փոփոխման համար, տարածաշրջանային գործակալությունները և ծրագրերի հեղինակները իրենք սկսեցին առավել խորը հասկանալ «բնապահպանական կայունություն» հասկացության կարևորությունը և փորձեցին ներկայացնել դա իրենց առաջարկներում, որը երևաց առաջարկների (բարելավված) որակից: Այս ամենը այն փաստի շնորհիվ էր, որ նույնիսկ ծրագրի «բնապահպանական կայունություն» ուղեցույցը փորձում էր համակցական մոտեցում ցուցաբերել:

Ծրագրի գնահատման անմիջական համագործակցությունը ավարտվեց 2007թ., բայց ՀԿ-ների փորձագետների ներգրավման որոշ մակարդակը որոշումների նախապատրաստման գործընթացում ապահովվում էր 2007 թ.-ից մինչև 2010թ.: Ի թիվս այլոց, ՀԿ-ների փորձագետները հնարավորություն ունեին կիրառել՝ հետևել խիստ չափանիշներին՝ փորձագետների խմբին անդամակցելու համար: Յուրաքանչյուր ծրագրի գնահատման հանձնաժողովի անդամները ընտրվում էին այս թիմից վիճակահանության միջոցով: Հսկայական քաղաքացի էր, երբ կառավարությունը հրապարակեց ԵՄ ֆինանսավորմամբ իրականացված ծրագրերի որոնողական տվյալների շտեմարանը՝ յուրաքանչյուր ծրագրի մասին հիմնական տեղեկատվությամբ, ներառյալ՝ ծրագրի գնահատման հանձնաժողովի անդամների անունների ցանկը: Ցավոք, իշխող կառավարությունը փոփոխեց ընթացակարգերի դրույթները և վերացրեց ՀԿ-ների փորձագետների պարտադիր ներգրավումը ծրագրի գնահատման թիմերում:

ԵՄ բյուջեով ՀԿ աշխատանքների ֆինանսավորումը

Ծրագրերի նախկին ժամանակահատվածում մի քանի գործառնական ծրագրեր առաջարկեցին ԵՄ համաֆինանսավորմամբ բյուջեի տողեր

ՀԿ-ների գործունեության համար: Հիմնական տարածաշրջանային ՀԿ-ների միաժամանակ ջանքերի արդյունքում, որոնց աջակցում էր Կանաչ շրջանների ցանցի տարածաշրջանային համակարգողները, տարածաշրջանային զարգացման գործակալությունները և ՏՉԳԾ-ն աջակցեցին ՀԿ գործունեության բյուջետային տողերի ներառմանն ուղղված նախաձեռնությունը տարածաշրջանային գործառնական գրեթե բոլոր ծրագրերում: Միջոցառումների թվում էր քաղաքացիական հասարակության ենթակառուցվածքի զարգացումը, ինչպես նաև տեղական կառավարությունների և ՀԿ-ների բնապահպանական համագործակցային ծրագրերի գործողությունները:

Բացի վերոնշյալ հիմնադրամներից, եղել են նաև մի քանի այլ մրցույթի հայտեր ՀԿ-ների համար սոցիալական նորացման գործառնական ծրագրի շրջանակներում: Հատուկ դրույթ սահմանվել է ՀԿ-ներից ցանցիկապերի հաստատման, քարոզչական և կազմակերպչական կարողությունների զարգացման առումով: Օրինակ, NSC ՎԼ FoE Hu-ն օգտագործեց ֆինանսավորման հնարավորությունը ուժեղացնելու Կանաչ շրջանների ցանցը՝ շրջանային ՀԿ-ների կարողությունների կառուցման միջոցով՝ աջակցելով տարածաշրջանային համակարգումը և ընդլայնելով ցանցը: Բնապահպանական ՀԿ-ները նաև բարեհաջող քարոզեցին բնապահպանական և էներգետիկ գործառնական ծրագրի համար՝ ներառելով հատուկ միջոց կայուն սպառման մասին իրազեկվածության բարձրացման արշավների մասին, որտեղ ՀԿ-ները կարող էին դիմել դրամաշնորհների համար:

Ծրագրերի վերջին ժամանակահատվածում կառավարությունը նեղացրեց ՀԿ-ների ֆինանսավորման հնարավորությունները ԵՄ բյուջեում, բայց մի քանի սահմանափակ միջոցառումներ բաց են բնապահպանական ՀԿ-ների ծրագրերի համար, օրինակ, հանրության իրազեկվածության բարձրացումը էներգետիկայի մասին կամ դպրոցներում առողջ սննդի մասին ոչ-ֆորմալ կրթական գործողությունների իրականացումը:

Սլովակիա

Ճանապարհը դեպի կենսամասսայի կայունության չափանիշների հաստատումը ԵՄ ֆինանսավորվող ծրագրերում

Ներածություն

Կենսաէներգիայի ծրագրերի զարգացումը Սլովակիայում գնալով ավելի մեծ պահանջարկ ունի փայտի կենսամասսայի նկատմամբ՝ հանգեցնելով մասսայական անտառհատման և կենսաբազմազանության նվազեցմանը, ի թիվս այլ բացասական ազդեցությունների: Հետևաբար, մի քանի բնապահպանական ՅԿ-ներ քարոզում էին ստեղծել թիրախ աշխատանքային խումբ, որը կմշակեր կենսամասսայի էներգիայի օգտագործման կայունության չափանիշները: Այս կոնկրետ դեպքի ուսումնասիրությունը ամփոփում է հիմնական քայլերը և այս գործընթացից քաղված դասերը:

Փայտի պահանջարկը ԵՄ բոլոր երկրների էներգետիկ ոլորտում, ներառյալ Սլովակիայում, պայմանավորված է հետևյալ գործոններով՝

1. Երկրագնդի չվերականգնվող բրածո վառելանյութերի պաշարների սպառում, էներգաարդյունավետության և հասանելիության նվազում,
2. Համաշխարհային կլիմայի փոփոխության ընթացքը և բնույթը, ինչպես նաև ակնկալվող տնտեսական, սոցիալական և բնապահպանական ազդեցությունների կանխատեսումները,
3. Կենսամասսայից ստացվող էներգիան նախընտրելի է և սուբսիդավորվող,
4. Աղքատություն, այլ վառելանյութերի արժեք և այլ գործոններ:


Կենսաէներգիայի մեծամասնության դեպքում (բացառությամբ կենսավառելանյութերի տրանսպորտային ոլորտում) չկան կայունության պահանջներ, հետևաբար, մենք որևէ միջոց չունենք ապահովելու այն, որ կենսամասսայի օգտագործումը պահպանվի սահմանաչափերի շրջանակներում,

որոնք չեն պատճառում բնապահպանական վնաս: Սակայն կան ԵՄ դիրեկտիվաներ, որոնց պետք է համատասխանել:

Պարտավորվելով ընդունել կայունության չափանիշներ էներգիայի գեներացիայի համար փայտի կենսամասսայից կենսաէներգիայի ցանկացած նոր ծրագրում, որը ֆինանսավորում է Եվրոպական կառուցվածքային և ներդրումային հիմնադրամներով (ԵԿՆՀ), Սլովակիայի կառավարությունը հարկադրեց իրեն սկսել քաղաքականապես զգայուն գործընթաց:

Ինչպես երևում է ստորև բերված աղյուսակում, կայունության չափանիշների բացակայությունը հանգեցրել է այն փաստի, որ ԵՄ ֆինանսերի հսկայական գումարները ծախսվել է կառուցելու լայնամասշտաբ, փայտի-հենքով ջերմակայաններ և էլեկտրակայաններ, որոնք և՛ համայնքային, և՛ արդյունաբերական տիպի են (մուգ կապույտ):

Հանրության սուբսիդիաները՝ նախատեսված մեղմացնելու կլիմայի փոփոխությունը, հաճախ աջակցել է բրածո վառելանյութով աշխատող տարածքային ջեռուցման հին կայանների վերակառուցմանը կամ ընդլայնմանը, երբ նրանք պարտավորվել են ավելացնել փայտը իրենց վառելանյութերի բազայում (մուգ կապույտը՝ նույնպես): Բացի այդ, ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող նոր տաքացուցիչները, որոնք աշխատում էին փայտով, հարյուրավոր հասարակական վայրերում փոխարինեցին քարածխով, կոքսով, էլեկտրականությամբ կամ գազով աշխատող ավելի հին տաքացուցիչներին (բաց կապույտ): Արդյունքում, փայտի սպառում էլեկտրաարտադրության նպատակներով Սլովակիայում աճեց 70 %-ով պարզապես 9-ը տարվա ընթացքում (2005-2014թթ):



Այլ կողմի աղյուսակը ցույց է տալիս այս չկանոնակարգվող ցանցի մուտք մասը: Կենսաէներգետիկ նախագծերի սուբսիդավորված զարգացումը Սլովակիայում զգալիորեն մեծացրել է փայտի կենսամասսայի պահանջարկը: Ի հայտ եկան մեծ թվով նոր ընկերություններ, որոնք զբաղվում

են փայտի հատմամբ, փայտի տեղափոխումը զգալիորեն նույնպես աճեց: Անտառներում փայտամթերումը գրեթե կրկնապատկվեց վերջին երկու տասնամյակի ընթացքում (1994-2014թթ), չնայած այն փաստի, որ անտառների տարածքը մնաց նույնը, իսկ փայտահատումը դեռ շարունակում է աճել: Նույնը վերաբերվում է պաշտոնական անտառտնտեսության պլանավորմանը: Աճող պահանջարկը նույնիսկ ընդլայնել է անգույթ փայտամթերումը բնապահպանական տեսանկյունից այնպիսի զգայուն վայրերում, ինչպիսիք են գետի ափերը, գյուղատնտեսական տարածքները, ճանապարհների երկայնքները և այլն:

Կենսամասսայի կայունության չափանիշների քարոզման քայլեր

Կենսամասսայի օգտագործման կայունության մասին դրույթները Գործընկերության համաձայնագրում և այլ հարակից Գործառնական ծրագրերում ներառելը. բանակցություններ, որոնց նպատակն է փաստաթղթերում ԵՄ օրենսդրության հետ համապատասխանելիության հասնելը: Գործընկերության համաձայնագրի շրջանակներում, մենք (բնապահպանական ԶԿ-ները) կարողացավ ներառել կենսամասսայի կայունությունը Կայուն զարգացման հորիզոնական սկզբունքի սահմանման մեջ: Այս հղումը օգտագործելով՝ այնուհետև մենք կարողացանք համապատասխանեցնել համապատասխան գործառնական ծրագրերի տեքստերը: Այս փուլում մանրամասների մակարդակը ցածր էր՝ Գործընկերության համաձայնագիրը և Գործառնական ծրագրերը ներառում էին հիմնական հայտարարություն, որ ԵՄ բյուջեն աջակցում է կենսամասսայի Էներգիայի օգտագործմանը, որոնք ենթակա են կայունության չափանիշներին, ինչպես նախատեսված է ԵՄ կանոնակարգերում:

Վերջինս հիմք ծառայեց հետագա բանակցությունների համար:

Գործընթացի բանակցումը. մեր ջանքերը կենտրոնացան Բնապահպանության նախարարություն վրա (ԲՆ), որը ղեկավարում է Շրջակա միջավայրի որակի գործառնական ձեռնարկը և անցյալում նրանք համագործակցելու ինչ-որ պատրաստակամություն էին հայտնել: Մենք նպատակ ունեինք ստեղծել ֆորմալացված թիրախ աշխատանքային խումբ՝ հաստատված ԳԾ մշտադիտարկման հանձնաժողովի ներքո: Այդ իսկ պատճառով, մենք խթանեցինք այդ աշխատանքային խմբերի ներգրավումը մշտադիտարկման հանձնաժողովների հիմնադիր փաստաթղթերում, որը և հաջողվեց: Մենք համոզեցինք ԲՆ-ին ստեղծել կենսամասսայի կայունության աշխատանքային

խումբ պետ. քարտուղարի և ԳԾ-ի ղեկավարման համար պատասխանատու նախարարության վարչության պետի հետ հանդիպումների միջոցով: Նախարարության այս ներկայացուցիչները հասկացան կիրառելի չափանիշներ ունենալու անհրաժեշտությունը՝ թույլ տալով ԵՄ ֆինանսների հատկացում կենսամասսայի աջակցության համար և համաձայնվեցին ստեղծել աշխատանքային խումբը:

ԲՆ-ն կարողացան ներառել ներգրավել Գյուղատնտեսության և համայնքային զարգացման նախարարությանն այս գործընթացում, քանի որ այս նախարարությունը նաև ներդրում է կենսամասսայի Էներգիայի օգտագործումը Զամայնքային զարգացման ծրագրի միջոցով (ԶԾ): Գյուղատնտեսության նախարարության դիրքորոշումը, սակայն, բավականին արհեստական էր: Այն միայն առաջադրեց ԶԾ-ի ղեկավար մարմնի ներկայացուցիչներ, բայց նախարարության անտառտնտեսության բաժինը (առանցքային բաժինը) անտեսեց այս գործընթացը: Այս փաստը նվազեցնում է չափանիշների ուժգնությունը: Իմանալով անտառտնտեսության բաժնի դիրքորոշումը՝ պետականորեն ճանաչված չափանիշների առաջմղումը դժվարին գործ կլինի:

Աշխատանքային խմբին հավաքելը. ԲՆ-ն պահպանեց թիրախ աշխատանքային խմբի անդամներին անվանելու իրավասությունը: Չնայած նրանք ընդունում էին մեր թեկնածուներին, նրանք հակված չէին բաց առաջադրման ընթացակարգին՝ փորձագետներին մրցույթի հայտ ներկայացնելու միջոցով, որը նվազեցնում է թիրախ աշխատանքային խմբի հանրային ընդունելիությունը:

Թիրախ աշխատանքային խմբի գործառնություն. այս չափանիշների ստեղծումը ենթակա էր հանրային գնման, քանի որ Բնապահպանություն չունեի ներքին փորձագետներ: Փորձագիտական և խորհրդատվական ծառայությունները գնվել էին նախարարության համար մեկ պայմանագրով:

Թիրախ աշխատանքային խմբի առաջին հանդիմանը 2016թ. մարտի 17-ին անդամներին տեղեկացրեցին, որ ԲՆ-ն արդեն ստորագրել է պայմանագիր փաստաթղթի մշակման համար առևտրային խորհրդատվական ընկերության հետ (իրավիճակի նախնական վերլուծություն և չափանիշների առաջարկում): Շատ շուտով պարզ դարձավ, որ խորհրդատվական ընկերությունը չի զբաղվում ոչ անտառտնտեսության, ոչ էներգետիկ հարցերով և վարձել է ավագ վերլուծաբան Անտառտնտեսության ազգային կենտրոնից (ԱԱԿ)՝ Գյուղատնտեսության նախարարության վերահսկողության ներքո գտնվող փորձագիտական հիմնարկ, որը պատասխանատու է անտառտնտեսության ոլորտի հետազոտության, տեղեկատվության և պլանավորման համար:

Այս առանցքային անձի անձնական շահագրգռվածությունը, որը ներկայացնում էր անտառտնտեսության ոլորտը և նշանակված էր ամբողջ փաստաթուղթը մշակելու համար, շուտով ակնհայտ դարձավ: Հետևաբար, ՀԿ ներկայացուցիչները հարցականի տակ դրեցին թիրախ աշխատանքային խմբի հիմնումը, առաջին հանդիպմանը նրանք առաջարկեցին ներկայացնել իրենց սեփական վերլուծությունը և կազմել կայունության չափանիշները, որոնք պետք է մշակվեին նախքան պաշտոնական գործընթացի մեկնարկը (Կենսամասսայի օգտակար և արդյունավետ օգտագործման մասին հաշվետվություն առաջարկների հետ միասին, 2016թ.): Այս փաստաթուղթը պատրաստվել էր CEPA-ի կողմից համագործակցելով 7 այլ ՀԿ-ների հետ, որոնք զբաղվում են կենսաբազմազանությամբ, անտառտնտեսությամբ և էներգետիկայով:

Այս փաստաթուղթը CEPA-ի երկարաժամկետ ջանքերի արդյունք էր և հիմնեց կայուն էներգիայի պլանավորման համակարգ մարզային և համայնքային մակարդակներով: Սլովակիայում անկայուն փայտամթերման և փայտի կենսամասսայի օգտագործման խորը վերլուծության հետ միասին այն պարունակում է հանձնարարականներ պետական իշխանությունների համար՝ առաջարկելով խթաններ կենսաէներգիայի համար և կայունության չորս հիմնական չափանիշներ (1. Մինիմալ էներգախնայողություն փայտի հենքով տաքացվող շինությունների համար 2. Փայտի հենքով տաքացուցիչների/վառարանների երաշխավորված մինիմալ արդյունավետություն 3. էներգիայի/վառելանյութի գեներացիայի համար օգտագործված կենսամասսայի ծագման վայրի մասին հայտարարագիր 4. Փայտի կենսամասսայի տեղափոխման առավելագույն հեռավորությունը էներգիայի գեներացիայի/ամբողջ կենսափուլի համար):

Գործընթացի սկզբում այս զարմացող առաջարկը կարևոր գործոն էր թիրախ աշխատանքային խմբի դինամիկան փոխելու գործում, քանի որ խումբը սկսեց քննարկել ՀԿ առաջարկը: Մինևույն ժամանակ ՀԿ ներկայացուցիչները խստորեն քննադատեցին ԱԱԿ փորձագետի կողմից մշակված նախնական փաստաթղթերը և պահանջեցին զգալի փոփոխություններ կատարել: Նրա կողմից մշակված նախնական փաստաթղթերը, մի կողմից, միանշանակորեն գերազնահատում էր փայտի առկա պաշարները և միաժամանակ զգալիորեն թերզնահատում փայտի իրական սպառումը էներգիայի արտադրման նպատակով՝ վերլուծության վերջնական արդյունքն օրինակացնելու նպատակով: այն որ առկա է փայտի կենսամասսայի ավելցուկ անտառահատման և սպառման հետագա աճի համար, և հետևաբար

կայունության չափանիշները պետք է բավարար ճկուն լինեն՝ թույլ տալու կենսաէներգետիկ ոլորտի հետագա ֆինանսավորումը:

Պետք է նշել, որ պետական գործակալությունների ներկայացուցիչների դիրքորոշումները և գործողությունները արդար էին և առաջադիմական: Միայն Գյուղատնտեսության նախարարության ներկայացուցիչները հետզհետե դադարեցին համագործակցել թիրախ աշխատանքային խմբի հետ: ակնհայտ էր, որ կայունության չափանիշների ընդունումը նրանց շահերից չէր բխում:

Պաշտոնական գործընթացի ժամանակացույցի համաձայն, վերլուծությունը պետք է վերջնական տեսքի բերվեր մայիսին, իսկ չափանիշների նախնական տարբերակը՝ 2016թ. հունիսին: Սակայն, ՀԿ-ների և նախագծողի միջև անհամաձայնությունների ուշացման պատճառ դարձան, իսկ ԲՆ-ն չէր ցանկանում այն ավարտին հասցնել առանց բոլոր շահառուների միջև հիմնական կետերի վերաբերյալ համաձայնության գալու: Այս ուշացման հետևանքով լրջորեն հետաձգվեցին ESIF-ի կողմից ֆինանսավորվող կենսամասսայի կամ կենսաէներգետիկ ծրագրերի հայտերի մրցույթի հայտարարումը Սլովակիայում:

Չափանիշների հաստատումը. թիրախ

աշխատանքային խմբի միջև երկկողմանի բանակցությունների շարքից հետո ՀԿ ներկայացուցիչները համաձայնության եկան չափանիշները սկզբունքային փոփոխությունների վրա փաստաթղթի վերլուծական մասում նրանց կողմից պնդվող երեք չափանիշները ընդունելու դիմաց (CEPA-ի սկզբնական բովանդակություն առավել քան 50%-ը): Արդյունքում, ԲՆ-ն ընդունեց փոխհամաձայնության արդյունքում ստեղծված փաստաթուղթը 2016թ. սեպտեմբերի 8-ին՝ նախնական միջգերատեսչական կարծիքների ներկայացման ընթացակարգի համար (այս գործընթացը հանրային է՝ հավաքելով բոլոր գործակալությունների և հանրության մեկնաբանությունները նախքան փաստաթղթի պաշտոնական ընդունումը):

Փաստաթղթի հրապարակումը առաջացրեց Wolf անտառների պաշտպանության շարժման խիստ ընդդիմությունը, որը պահանջեց այն ամբողջովին վերամշակել և չեղարկել կենսաէներգետիկ ծրագրերի հանրային սուբսիդիաները: ԲՆ-ի և ՀԿ-ի միջև ընթացող երկարատև և անհաջող բանակցություններից հետո ԲՆ-ն որոշեց փակել հանրության կողմից կարծիքների ներկայացման ընթացակարգը և ներկայացրեց փաստաթուղթը Բնապահպանության գործառնական ծրագրի որակի մշտադիտարկման հանձնաժողով: Ինն ամիս անց այս հանձնաժողովը ի վերջո քվեարկեց հոգուտ փաստաթղթի: 2017թ. հունիսի 20-ին չնայած կենսաէներգիայի աջակիցների ընդդիմությանը,

այն ընդունեց չափանիշների նախագիծը, մինչդեռ վերլուծական մասը ո՛չ քննարկվեց և ո՛չ էլ ընդունվեց և հետաձգվեց հետագա քննարկման համար:

Թիրախ աշխատանքային խմբի հետագա աշխատանքը. բնապահպանության նախարարությունը պետք է ստեղծի աշխատանքային համակարգ չափանիշների կիրառման համար: Այն պետք է ստեղծի պայմաններ, հաշվետվությունների ներկայացման ընթացակարգեր և վերահսկման մեխանիզմներ: Այն ենթակա է հետագա բանակցությունների 2017թ.-ի վերջում:

Քաղված դասեր

1. Կենսամասսայի օգտագործման համար կայունության չափանիշների ստեղծումը այս դեպքում պայմանավորված էր ԵՄ ֆինանսների ներգրավմամբ և ոչ թե անտառտնտեսության և էներգիայի արտադրության կայունությունը ապահովելու քաղաքական կամքի ուժով, որը սահմանափակում է չափանիշների կիրառելիությունը:

2. Առկա է համագործակցության պակաս նախարարությունների միջև և քիչ հնարավորություններ կան ստեղծել միջսեկտորիալ թիրախ աշխատանքային խումբ: Սլովակիայում գրեթե ցանկություն չկա ձևափոխել անտառտնտեսությունը: Գյուղատնտեսության նախարարության անտառտնտեսության բաժինը ակնհայտ անտեսում է կայունության չափանիշների ներդրման ջանքերը և ժխտում է Սլովակիայում անտառի դեգրադացման և սպառման ապացույցները:

Ընթացիկ իրավիճակ և հաջորդ քայլերը

Կենսաէներգիայի օգտագործման հետ կապված բացասական ազդեցություններն հաստատող ապացույցների կուտակման շնորհիվ, ինչպես օրինակ՝ արժեքավոր անտառային Էկոհամակարգերի ոչնչացումը (որոնք մենք տեսնում ենք Սլովակիայում) ԵՄ մակարդակով մեկնարկել են քննարկումները կենսաէներգիայի կայունության նոր և բարելավված քաղաքականության մասին քննարկումները: Դժբախտաբար, Եվրոպական հանձնաժողովի առաջարկը՝ կենսաէներգիայի մասին նոր քաղաքականությունը, որը հրապարակվել է Մաքուր էներգիայի փաթեթի շրջանակներում՝ 2016թ. նոյեմբերին, բավարար չէ արգելակելու ներկայիս քաղաքականությամբ շրջակա միջավայրին պատճառվող վնասը: Այժմ ազգային կառավարությունների (հանձնաժողով) և Եվրոպական խորհրդարանի ձեռքում է ուժեղացնել քաղականությունը այնպես, որ այն

իսկապես ապահովի էներգետիկ նպատակներով կենսամասսայի երկարաժամկետ օգտագործումը և կայունությունը: Երկրները, որոնք ունեն կայունության գործող չափանիշներ կամ սերտիֆիկացման սխեմաներ, լավագույն դիրքում են քարոզելու այնպիսի լուծումներ, որոնք ֆունկցիոնալ են և արդյունավետ:

Էներգետիկ նպատակներով փայտի մասսայի կայունության վերջնական չափանիշները համաձայնեցված թիրաճ աշխատանքային խմբի շրջանակներում

Ստորև նշված բոլոր երեք չափանիշներն ունեն բացառման չափանիշի բնույթ, այսինքն, որպեսզի ծրագիրը կայուն համարվի, անհրաժեշտ է բավարարել բոլոր երեք չափանիշները: Չափանիշներից մեկին չբավարարելը ծրագրի մերժման հիմք է ծրագրի քննարկման գործընթացում: Համապատասխան գործառնական ծրագրի միջնորդ մարմինը իրականացնում է չափանիշների համապատասխանման ստուգումը:

Չափանիշ 1. Նախնական հումքի ծագման ապացույց

Այս չափանիշը պետք է ապահովի փայտանյութի ամենաարդյունավետ կառավարում կայուն ձևով, այսինքն՝ անտառային և ոչ-անտառային տարածքների, ինչպես նաև պինդ փայտի հենքով մնացորդների առավելագույն գործածումը, որոնք Սլովակիայի էներգիայի արտադրության համար փայտի կենսամասսայի ամենակարևոր աղբյուրներն են: Այս չափանիշի նպատակն է կանխել վառելանյութի արտադրությունը և ջեռուցման և էլեկտրաէներգիայի ստացումը փայտից, որոնց տեխնիկական պարամետրերը թույլ են տալիս դրանք օգտագործել/վերամշակել ավելի բարձր արժեքով: Միևնույն ժամանակ դրա նպատակն է կանխել փայտի կենսամասսայի ոչ-անտառային տարածքներից, որոնք շահագործվում են՝ հակասելով պահպանվող տարածքների և բնության 2000 տարածքների կառավարմանը:

Չափանիշ 2. Տեղափոխում և բախշում

Այս չափանիշի նպատակն է աջակցել էներգետիկ օգտագործման նպատակով փայտի կենսամասսայի ներուժի կայունության ապահովմանը, ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանը, էներգետիկ անվտանգության աճին և ինքնաբանությանը (մասնավորապես ավելի քիչ զարգացած շրջաններում) և բրածո վառելանյութերից կախվածության նվազեցումը: Այս չափանիշը նաև փորձում է մեծացնել փայտի կենսամասսայի հոսքերի թափանցիկությունը:

Այն փաստի շնորհիվ, որ կենսամասսայի հասանելիության պահանջարկի դոմինանտությունը կարող է առաջանալ որոշ շրջաններում, Էներգետիայի արտադրության համար փայտի կենսամասսայի կայունությունը ապահովվում է տեղափոխման հեռավորության որոշմամբ, այսինքն՝ ուղիղ հեռավորությունը ծագման վայրից դեպի սպառման վայր հետևյալ կերպ՝

(Ա) Տեղափոխման հեռավորությունը փայտի կենսամասսայի օգտագործման համար Էներգետիկ նոր հարմարությունների կառուցման համար 50 կմ է սահմանված տարածքի շրջանակներում:

(Բ) Տեղափոխման հեռավորությունը փայտի կենսամասսայի օգտագործման համար արդեն գոյություն ունեցող Էներգետիկ հարմարությունների վերակառուցման կամ արդիականացման համար 100 կմ է սահմանված տարածքի շրջանակներում:

Այս չափանիշի նպատակն է, բացի փայտի կենսամասսայի օգտագործման շրջանային մոտեցման տրամադրումից, նաև հասնել ջերմոցային գազերի արտանետման նվազեցման օպտիմալ մակարդակին՝ սահմանափակելով փայտի կենսամասսայի տեղափոխումը, ինչպես նաև փոխարինելով բրածո վառելանյութով աշխատող այրման հին կայանները (օրինակ, քարածուխ) Էներգախնայող փայտի հենքով աշխատող տաքացուցիչներով, որոնք տեղադրված են փայտի կենսամասսայի ոչ բավարար հասանելիություն ունեցող շրջաններում:

Չափանիշ 3. Փայտի կենսամասսայի Էներգիայի ձևափոխման արդյունավետություն

Այս չափանիշի նպատակն է մեծացնել Էներգետիկ արտադրության համար փայտի կենսամասսայի օգտագործման արդյունավետությունը, ներառյալ՝ ջերմոցային գազերի արտանետման նվազեցումը և այլ աղտոտիչների կրճատումը, որոնք առաջանում են Էներգիայի ձևափոխումից: Նվազագույն երաշխավորված Էներգիայի ձևափոխման արդյունավետության արժեքները ծագում են Վերականգնվող այլընտրանքային աղբյուրների Էներգիան խթանելու մասին 2009/28/EC դիրեկտիվայի 13-րդ հոդվածի 6-րդ կետից:

Լեհաստան

Թափոնների կառավարման մարտահրավերներ

Ներածություն

Լեհաստանին հատկացվել է ԵՄ ֆինանսներից որոշակի գումար թափոնների կառավարման համակարգերն արդիականացնելու համար: Թե կոնկրետ ինչպես այս այս միջոցները ծախսվելու պետք է որոշի ազգային ղեկավարությունը սոցիալական գործընկերների հետ խորհրդակցելով: Լեհաստանի ազգային ցանցը փորձում էր օգտագործել այս տարածքը հանրային մասնակցության համար՝ խթանելու կառավարությանը ծախսել գումար վերամշակման և շրջանաձև տնտեսության լուծումների և ոչ թե թափոնների այրման մեծ վառարանների համար: Մենք մեծ հաջողության չհասանք, քանի որ լավ փաստարկները բավարար չէին: անհրաժեշտ է օգտագործել հմտություններ և ջանքեր համոզելու ուրիշներին ընդունել դրանք: Լեհաստանի թափոնների կառավարումը հեռու է կատարյալ լինելուց: Երկիրը վերամշակում է թափոնների միայն մոտ 26%-ը և բավականաչափ շատ թափոն դեռևս հայտնվում են աղբավայրերում՝ ստեղծելով բնապահպանական և սոցիալական խնդիրներ, վերցնելք, օրինակի համար, Ռադիոփո աղբավայրը, որը գտնվում է Վարշավայից դուրս և որը պետք է փակվեր մի քանի տարի առաջ, սակայն դեռ շարունակում է աշխատել՝ թունավորելով շրջապատող տարածքը և բարկացնելով տեղի բնակիչներին, որոնք անդադար պայքարում են դրա դեմ: Լեհաստանը դեռևս ամբողջությամբ չի իրականացրել 2008թ. ԵՄ դիրեկտիվան թափոնների մասին, որը սահմանում է վերամշակման թիրախները: Միևնույն ժամանակ ԵՄ-ն ընդունել է 2016թ. Շրջանաձև տնտեսության փաթեթը, որը, ի թիվս այլ միջոցառումների, պարտադրում է վերամշակման առավել վերամբարձ թիրախներ և ներդրում է այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են արդյունաբերական սիմբիոզը, որտեղ արդյունաբերության մեկ ճյուղի թափոնը դառնում է մեկ այլ ճյուղի հումք: 2016թ. փաթեթը նաև ներկայացնում է նաև արտադրողի ընդլայնված պատասխանատվության հասկացությունը, որը ստիպում է արտադրողներին պատասխանատու լինել այն թափոնների համար, որ իրենց արտադրանքը դառնում է: Այս համատեքստում,

թափոնների կառավարման համար հասանելի ֆինանսավորման մեծ մասը նոր այրման գործարանների վրա ծախսելու լավագույն գաղափարը չի: Սակայն հենց դա է նախապես առաջարկվել 2017թ. սկզբում, երբ Լեհաստանի ղեկավարությունը թափոնների կառավարման նախագծերի ներկայացրեց մանրամասն ծրագրերի փաստաթղթի նախնական տարբերակը, որին աջակցելու են ԵՄ հիմնադրամները և նախագծերի ընտրման չափանիշները:

Խնդիրների նույնականացումը

Փաստաթղթերը մանրամասն ներկայացնում էին, թե թափոնների կառավարման ինչպիսի նախագծեր իրավունք կունենան աջակցություն ստանալ ԵՄ հիմնադրամներից: Այն փաստն է, որ դրանց հիմնական գաղափարն էր զբաղվել Լեհաստանի ուժեղ կախվածությամբ թափոնների աղբավայրերից կառուցելով ավելի շատ այրման գործարաններ, որը խնդրահարույց էր մի քանի ձևով: Առաջինը, այդպիսի մոտեցումը դեմ է ԵՄ թափոնների հաստատված քաղաքականության նպատակների դեմ, որոնք են նվազեցնել, վերաօգտագործել և վերամշակել թափոնը, իսկ այրել միայն այն մնացորդային թափոնը, որն այլ կերպ չի կարող տնօրինվել: Երկրորդը, նոր շրջանաձև տնտեսության 2016թ. ընդունված նպատակների համատեքստում, ինչպես հաստատված է Եվրոպական խորհրդարանի Արդյունաբերության, հետազոտության և էներգետիկայի խորհրդարանի կողմից, որը վերջերս քվեարկեց թափոն-էներգիա սխեմաների աջակցման դեմ՝ պնդելով, որ դրանք դժվար է համաձայնեցնել շրջանաձև տնտեսության սկզբունքների դեմ: Եթե Լեհաստանը ծախսեր ԵՄ ֆինանսները, որոնք առկա են թափոնների այրման նոր գործարանների համար, այն ի վերջո կհայտնվեր փակուղում՝ ունենալով հին տեխնոլոգիա, որը կարող է կանգնել շրջանաձև տնտեսության լուծումների զարգացման ճանապարհին կամ կբախվեր առանց աշխատող ակտիվների մնալու ռիսկին, այսինքն՝ թափոնների այրման գործարանները, որոնք փորձում են բավարարել բնապահպանական պահանջները կամ նույնիսկ գտնել բավարար թափոններ այրման համար: Ի վերջո, թափոնների այրման գործարանների կառուցումը սոցիալական կոնֆլիկտի գործոն է, քանի որ ոչ ոք չի ցանկանում նման տեսակի գործարաններ ունենալ իրենց թաղամասում՝ աղտոտման բնապահպանական ռիսկերի և աղբով բեռնված բեռնատարներ տեսնելու (հոտոտելու) հաճույքի պատճառով, որը խցանման պատճառով ժամերով կանգնել ինչ-որ մեկի պատուհանների տակ:

Գործընկերության մերթոլ

Լեհաստանի կանաչ ցանցը (ԼԿՑ) Ենթակառուցվածքի և բնապահանության մշտադիտարկման հանձնաժողովի անդամ է, մի մարմին, որը բաղկացած է կառավարության, տեղական ինքնակառավարման մարմնի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից, որոնք հաստատում ծրագրերի փաստաթղթերը և չափանիշները, որոնց հիման վրա Ենթակառուցվածքային և բնապահպանական ծրագրերը ընտրվում են ԵՄ աջակցության համար: Այս կարգավիճակով ԼԿՑ-ն կարողացավ հրավիրել արտաքին փորձագետի, որը ներկայացրեց Մշտադիտարկման հանձնաժողովին և դիտարկումներ արեց նախագծի վերաբերյալ: Փորձագետը ներկայացրեց փաստաթղթի նախնական տարբերակում կատարվելիք փոփոխությունների երկար ցուցակ: Նա կոչ արեց առավել շատ ուշադրություն դարձնել թափոնների կրճատմանը և վերամշակմանը և նշեց, որ լիովին հնարավոր է իրականացնել թափոնների կառավարման համապարփակ լուծումներ առանց այրման գործարանների և պնդեց, որ այդպիսի լուծումները կարող են առավել օգտակար լինել Թափոնների մասին դիրեկտիվայով սահմանված թիրախներին հասնելու և շրջանաձև տնտեսության հետագա մարտահրավերներին բախվելու առումով: Փորձագետը նաև զգուշորեն ընդգծեց այն բոլոր դրույթները, որոնք անհամատեղելի էին շրջանաձև տնտեսության հետագա նպատակների, թափոնների մասին ԵՄ ներկայիս ուղեցույցների և նույնիսկ Լեհաստանում գործող թափոնների մասին ազգային օրենսդրության հետ:

Հանրային մասնակցության ավելացած արժեքը

Նախապես առաջարկված չափանիշները որևէ հնարավորություն չէին թողնում Լեհաստանին դարձնել առավել մոտ վերամշակման ներկայիս թիրախներին հասնելու համար՝ մի կողմ թողնելով շրջանաձև տնտեսության ապագա մոդելները և կստեղծի չափատող ակտիվների ռիսկ, այսինքն՝ սխալ ուղղորդված ներդրումներ, որոնք գումարը երբեք հետ չեն բերում: ԼԿՑ-ի կողմից հրավիրված արտաքին փորձագետի ներգրավումը հնարավորություն ստեղծեց Լեհաստանում ԵՄ ֆինանսների կառավարման համար պատասխանատու հիմնարկի համար զգալիորեն բարելավել ԵՖ ֆինանսների ծախսման որակը, խուսափել ներդնել փողը սարքերի համար, որոնք հավանաբար կհնանան, մինչև ներդրված փողը կփոխհատուցվի և կաջակցի նորարարական ծրագրերը, որոնք իսկապես կբերեն թափոնների

կառավարումը Լեհաստանում 21-րդ դարի պահանջներին:

Քաղված դասեր և խորհուրդներ

Դժբախտաբար, այս հնարավորությունը իզուր վատնված էր: Ի վերջո, ընդամենը մի քանի կարծիք էր հաշվի առնվել և վերջնական փաստաթղթերում առաջնահերթությունը տրված էր թափոնների այրմանը որպես աղբավայրերի կրճատման միջոց: Լեհաստանը այժմ կարող է շարժվել առաջ 34 նոր ԵՄ-ֆինանսավորվող թափոնների այրման նախագծերով: Սա շատ վատ նորություն է շրջակա միջավայրի և այն համայնքների համար, որոնք վրա ազդեցություն է թողնելու աղտոտումը և աղբով լի բեռնատարների երթևեկությունը: Դա նաև վատ նորություն է թափոնների այլընտրանքային կառավարման ռազմավարությունների մշակման համար՝ հիմնված նվազեցման, վերաօգտագործման և վերամշակման վրա: Այս ռազմավարությունները իմպուլս չեն ստանա զարգացման համար, քանի որ այրման գործարանները հավանաբար կկլանեն հասանելի ֆինանսավորման մեծ մասը: ԵՄ գումարը կգործածվի Լեհաստանում պահպանելու հին համակարգը պահպանելու վրա՝ ֆինանսական առաջընթացի և նորարարության փոխարեն:

Կարող էի՞նք ավելի լավ անել: Հավանաբար, այո: Այս պատմության առակն այն է, որ Մշտադիտարկման հանձնաժողովի հանդիպմանը շնորհանդեսով ներկայանալը, անկախ նրանից թե որքան լավ է դա փաստարկված, «չափազանց քիչ է և չափազանց ուշ»: Եթե դուք ունեք մի խումբ անձինք, որոնք միշտ կարծել էին որ այրումը հասանելի ամենալավ և ամենաառաջադիմական լուծումն է և դու ցանկանում ես մարտահրավեր նետել այդ տեսակետին, համոզել այդ մարդկանց, որ այրման գործարանները փաստացի հնացել են և առաջ քաշես թափոնների մասին կտրականապես տարբերվող մտածելակերպ, պետք է սկսես առավել վաղ փուլում: ԼԿՑ-ն կարող էր առավել լավ նախապատրաստել հիմքերը՝ կարծիքները նախապես ուղարկելով Մշտադիտարկման հանձնաժողովի բոլոր անդամներին կարճ բացատրության հետ միասին, թե ինչու թափոնների այրումը համատեղելի չէ շրջանաձև տնտեսության ապագա մոդելի հետ և թե ինչու դրա փոխարեն պետք է աջակցել այլընտրանքային լուծումներին: Մշտադիտարկման հանձնաժողովի սահմանափակ ժամանակը և տարածքը բավարար չէր հանձնաժողովի բոլոր անդամներին համոզելու համար. թափոնների մասին հին մտածելակերպը ի վերջո գերիշխեց:

Եզրակացություն

Բաց թողնելով թափոնների ֆինանսավորման այս հնարավորության վրա ազդեցություն ունենալու հնարավորությունը՝ ՀԿ-ները կարող են այժմ բացահայտել այլ ուղիներ (ինչպես օրինակ, հանրային մասնակցությունը բնապահպանական թույլտվությունների տրամադրման ընթացակարգերում)՝ փորձելով կանխել այրման 34 նոր գործարանների կառուցումը Լեհաստանում: Այս անգամ մենք ստիպված ենք առավել լավ գործել, այլապես Լեհաստանը կարող է հայտվել այնպիսի իրավիճակում, որ ներմուծում է այն երկրների աղբը իր ամբողջովին նոր թափոնների այրման գործարանների հսկայական բանակը աշխատեցնելու համար:

S7 մայրուղին Լեհաստանում՝ նախազգուշական պատմություն

Ներածություն

S7 մայրուղին Լեհաստանում կարևոր երթուղի է, որը, եթե կառուցվեր նախագծի համաձայն, կհատեր պաշտպանության ներքո գտնվող թիթեռների բնօրրանը: Այն ֆինանսավորվել է ԵՄ-ի կողմից, սակայն լեհական բնապահպանական կազմակերպությունները գործադրել են բոլոր միջոցները, որը թույլ է տալիս ԵՄ գործընկերության շրջանակը ծրագիր փոփոխելու և բնօրրանը փրկելու համար: Այնուամենայնիվ ներդրողը և պետական ղեկավարությունը հրաժարվում էին վերաբերվել նրանց որպես գործընկերներ, իսկ արդյունքը հիասթափեցնող է:

Պատմություն

S7-ը հիմնական տրանզիտային երթուղի է, որը միացնում է Լեհաստանի հիմնական քաղաքները. այն սկսվում է հյուսիսում գտնվող Գդանսկից մինչև Լեհաստանի կենտրոնում գտնվող Վարշավա և հարավում գտնվող Կրակով: Որպես հյուսիս-հարավ տրանսպորտային առանցք, այն կարևոր և ծանրաբեռված երթուղի է, որը գտնվում է մայրուղու չափանիշների համապատասխանեցման գործընթացում: Ճանապարհային աշխատանքները բաժանվել են հատվածների՝ յուրաքանչյուր հատվածի համար առանձին թույլտվությունների ստացման և տեղերների հայտարարման ընթացակարգերով: Հատվածներից մի քանիսը արդեն իսկ արդիականացվել են, մի քանիսը դեռ շինարարության փուլում են և մյուսները դեռ

թույլտվությունների ստացման փուլում են: Ամբողջ ծրագիրը ֆինանսավորվում է ԵՄ դրամաշնորհի և ԵՆԲ-ի կողմից տրամադրված վարկային միջոցներով:

Այն հատվածը, որը քննարկելու ենք, ութ կիլոմետրանոց հատված է Լեհաստանի կենտրոնում գտնվող Սկարժիսկո Կամինսո քաղաքի մոտ:

Խնդրի նույնականացում

Ճանապարհի երթուղին, որը նախապես առաջարկվել էր GDDKIA-ի Լեհաստանի ճանապարհաշինարարական մարմնի կողմից, հակասական էր բնապահպանական տեսանկյունից: Հին ճանապարհն արդիականացնելու փոխարեն GDDKIA-ն նախընտրեց նորից կառուցել Սկարժիսկո հատվածը՝ անցնելով Օլեշնիցա գետի հովտում գտնվող գետի և մարգագետինների միջոցով սկզբնական ճանապարհից դեպի արևմուտք՝ բնակելի տարածքները շրջանցելու նպատակով: Սակայն քննարկվող մարգագետինները Լեհաստանի ամենակարևոր և վտանգված Marsh Fritillary ցեղատեսակի թիթեռների պոպուլացիաներից մեկի բնակատեղին են, իսկ գետի հովիտը կարևոր միգրացիոն միջանցք է գայլերի և որմնազղեղների համար: Ճանապարհի ծրագիրը նախատեսում էր հենց տեղում մեծ հանգույցի կառուցում, որտեղ գտնվում էին թիթեռների և դրանց սնուցող բույսերի ամենամեծ խտությունը: Ճանապարհը նաև սպառնալիք էր ներկայացնում վայրի կենդանիների միջանցքի համար, քանի որ այն չունի կամուրջ խոշոր կաթնասունների համար:

Գործընկերություն և հանրային մասնակցություն

«Pracownia»-ն, որը լեհական բնապահպանական ՀԿ է և մշտադիտարկում է ճանապարհային ծրագրերի շրջակա միջավայրի ազդեցությունը, որոշեց քարոզարշավ սկսել ճանապարհի վերանախագծման համար, որպեսզի ազատեր Marsh Fritillary ցեղատեսակի թիթեռների բնօրրանը: 2011թ. «Pracownia»-ն վիճարկեց ճանապարհի շինարարության թույլտվությունը՝ պնդելով, որ այն հիմնված է թերություններ ունեցող շրջակա միջավայրի ազդեցության գնահատման վրա: Երկարատև իրավական պայքարն ավարտվեց Գերագույն վարչական դատարանի դատավճռով, որը հաստատեց ճանապարհային շինարարության թույլտվությունը: Սակայն այս դատավճիռը հնարավոր եղավ միայն այն պատճառով, որ Լեհաստանը սխալ էր մեկնաբանել շրջակա միջավայրի ազդեցության գնահատման մասին ԵՄ դիրեկտիվան. փաստ, որն ակնհայտ դարձավ դատաքննության ընթացքում:

Միևնույն ժամանակ «Pracownia»-ն և «Bankwatch»-ը դիմեցին Եվրոպական ներդրումային բանկ (ԵՆԲ) և Եվրոպական հանձնաժողով՝ S7 մայրուղու ծրագրի ֆինանսավորողներին: Օգտագործելով Հանձնաժողովի և ԵՆԲ-ի բողոքների ներկայացման մեխանիզմները՝ երկու կազմակերպությունները բողոքներ ներկայացրեցին՝ պնդելով, որ ԵՄ դրամաշնորհի և ԵՆԲ-ի կողմից տրամադրված վարկային միջոցներով կառուցվելիք մայրուղին կկործանի Marsh Fritillary ցեղատեսակի թիթեռի բնօրրանը և խնդրեցին այդ երկու հաստատություններին գործել հոգուտ ճանապարհի ծրագրի փոփոխմանը: Այնուհետև բանկը սկսեց իրականացնել իր գնահատումը, իսկ Հանձնաժողովը մեկնարկեց ԵՄ փորձնական ընթացակարգը, այսինքն՝ նամակագրական կապի փոխանակում լեհական կողմի հետ լուծում գտնելու նպատակով:

2016թ. հանդիպում տեղի ունեցավ բնապահպանական կազմակերպությունների և Լեհաստանի ճանապարհաշինարարական մարմնի հետ: Հանդիպման ժամանակ մարմինը ներկայացրեց ճանապարհի համաձայնեցված տարբերակը, որը շրջանցում էր թիթեռի բնօրրանը: Մի կարճ պահ թվաց, որ խնդիրը լուծվել է, կարճ ժամանակ անց GDDKIA-ն մի կողմ դրեց այլընտրանքային լուծումը և շարունակեց աշխատել վիճարկելի երթուղիով՝ կատարելով միայն աննշան և փոքր փոփոխություններ: Հավանական պատճառաբանությունն այն է, թե ինչու որոշեցին կառուցել նախնական տարբերակով այն է, որ դեռ 2011թ., երբ թույլտվությունների տրամադրման ընթացակարգը դեռ հեռու էր ավարտից, այն գնեց հողատարածքը և մաքրեց անտառից: Եթե նրանք փոփոխեին երթուղին, ապա ռիսկի էին դիմում, որ իրենց կմեղադրեին հապճեպ բիզնես որոշումների մեջ: Ավարտելով իր գնահատումը՝ ԵՆԲ-ն որոշեց իր վարկի տեղակայումը կանգնեցնել, մինչև կգտնվի բավարար լուծում և Հանձնաժողովը լուծի այս գործը, որը դեռ ընթացում է: Սակայն GDDKIA-ն վերջերս որոշեց չսպասել ավարտին: 2017թ. հոկտեմբերի սկզբին հայտարարեց, որ անմիջապես մեկնարկում է շինարարական աշխատանքները և S7 մայրուղու Սկարթիսկո հատվածի ֆինանսավորումը կիրականացնի իր սեփական միջոցներով՝ այսպիսով գոնե մասամբ ազատելով իրեն ԵՄ հաստատությունների վերահսկողությունից:

Հանրային մասնակցության և գործընկերության սկզբունքի ավելացած արժեք

Հանրային մասնակցությունը կարող էր դրական դերակատարություն ունենալ այս ծրագրում, բայց այդ հնարավորությունը բաց էր թողնվել: «Pracownia»-ն ներգրավվել է վաղ փուլում՝ մատնանշելով

բնապահպանական ռիսկերը և նախագրուշացնելով ԵՄ հաստատություններին, որոնք արձագանքեցին և երկխոսություն սկսեցին ներգրավված կողմերի հետ՝ ստեղծելով ծրագրի փոփոխման տարածք: Լավ այլընտրանքը գործնականում կիրառելի էր և գոհացուցիչ փոփոխման համաձայնեցված լուծում էր գտնվել, սակայն արդյունքում ունեցանք ծրագիր, որը ուշացավ, բնապահպանական տեսանկյունից կործանիչ է և որի համար վճարել են լեհ հարկատուները, և ոչ թե ԵՄ-ն:

Քաղված դասեր և խորհուրդներ

Եթե այս պատմությունից կարելի է դաս քաղել, ապա հենց գործընկերությունն է և հանրային մասնակցություն կարող մեծապես բարելավել ներդրումային նախագծերը, եթե դրանց լուրջ են վերաբերվում: Ճանապարհային ծրագրերի համար սովորական երևույթ է ստեղծել բնապահպանական հակասություններ, բայց ազնիվ երկխոսության միջոցով հնարավոր է գտնել լուծումներ, որոնք նվազեցնում են շրջակա միջավայրին հասցրվող վնասը: S7-ի դեպքում հողատարածքը գնելու բիզնես որոշումը չափից շուտ էր կայացվել նախքան թույլտվությունների ստացման ընթացակարգի ավարտը, քանի որ ճանապարհային իշխանությունները կարծում էին, որ բոլոր թույլտվությունների ստացումը պարզապես ձևականություն է և չի քննարկել այս հարցի շուրջ քաղաքացիական հասարակության առարկությունները: Այնուհետև, ճանապարհային ոստիկանությունները ի վերջո սկսեցին պաշտպանել իրենց վաղահաս որոշումը և ի վերջո իրենք ֆինանսավորեցին ուշացած և բնապահպանական առումով վնասակար նախագիծը, որի համար դեռ կարող են պատասխանատվություն կրել: Այդ ամենը այն փաստի պատճառով, որ ընկերությունը հոգ չէր տանում շրջակա միջավայրի մասին և հրաժարվեց լսել նրանց, ովքեր հոգ էին տանում:

Եզրակացություն

Marsh Fritillary ցեղատեսակի բնօրրանը փրկելու պայքարն ընթանում է արդեն 7 տարի: Եթե ճանապարհն նախագծվեր՝ առաջին հերթին հարգելով շրջակա միջավայրը, այն արդեն իսկ կառուցված կլիներ հոգուտ տեղի բնակիչների և Լեհաստանի հյուսիս և հարավ ճանապարհորդող վարորդների: Այս յոթ տարիների ընթացքում բազմաթիվ հնարավորություններ էին եղել բարելավել ճանապարհի նախագիծը և խուսափել շրջակա միջավայրին հասցրվող վնասից: Սակայն պակասում էր համաձայնության գալու կամքի ուժը և ճանապարհային իշխանությունների անունից ազնիվ երկխոսության մեջ ներգրավումը:

Այս պատմության վերջնական ավարտը դեռ չկա: «Pracownia»-ն դեռ հայտի մեջ որոնում է հասանելի իրավական ուղիներ կանխելու Marsh Fritillary ցեղատեսակի բնօրրանի և վայրի կենդանիների միջանցքի կործանումը: Սակայն, եթե GDDKIA-ն գնա իր ճանապարհով, լեհ հարկատուները ստիպված են վճարել ճանապարհի ուշացված նախագծի համար, որը կարող էր, և պետք է ֆինանսավորվեր ԵՄ բյուջեի կողմից, իսկ Լեհաստանը և Եվրոպան կկորցնեն վտանգված վայրի բնության մի կարևոր մասնիկ: Հաղթողներ չեն լինելու:

«Ներգրավելով գործընկերներին ԵՄ ֆինանսավորմամբ ընթացող ծրագրերի պլանավորմանը, իրականացմանը, մշտադիտարկմանը և գնահատմանը՝ անդամ պետություններն առավել լավ կկարողանան ապահովել, որ միջոցները ծախսվեն այնտեղ, որտեղ առավելագույնս դրանց կարիքը կար և ամենալավ հնարավոր տարբերակով:»

Աշխատանքի, սոցիալական հարցերի և ներառականության հանձնակատար **Լազլո Անդորի** խոսքը Եվրոպական կառուցվածքային և ներդրումային հիմնադրամների շրջանակներում գործընկերության եվրոպական վարվեցողության կանոնագրքի առաջաբանում: